

7250

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Գ Ր Ե Ց

ԵՂԻԱ ՎԱՐԴ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ

281 (= 91.54)

Σ - 38

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Իշխերասպ. օր. Ն. Աղանեսանցի, Պոլից, 7.

1911

ՏԻՐՈՒՄ, ԺՈՒՐ

191 OCT 2009

281(=91.54)

2-38

280

864-2Ա

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

1005
20138

Գ Ր Ե Ց

ԵՂԻԱ ՎԱՐԴ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

անդրաբիլ ԵՂԻ

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵՆԻՑ

18 ՆՈՅԵՄ. 1918 Ք, ԹԻՖԼԻՍ.

Թ Ի Յ Լ Ի Ս

ԵԼԵՔՏՐՈՆԱԿԱՆ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻՑ. 7.
1910

Թ. 1910, Մայիսի 10. յԷջմիածին

ԵՐՈՒԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ

Դուք ձեր «Հայոց եկեղեցւոյ վերանորոգութեան խնդիրը» վերնագրով, ներկայ տարուս հրատարակած գրքուկի յառաջաբանով ասում էք, «Յոյս ունենանք, որ գոնէ սրանից յետոյ Հայոց եկեղեցու հոգևորականութիւնը տարրական քաղաքացիական քաջութիւն կունենայ խոստովանելու իմ ասածների բացարձակ ճշմարտութիւնը... կամ բանական հիմունքներով քրիստոնէական կրօնի սկզբունքների պարզաբանութեամբ ակնյայտնի կ'կացուցանէ, որ ես սխալվում եմ... Եւ եթէ, այլ կերպ վարուելու լինի Հայոց բարձրագոյն հոգևորականութիւնը, հասկացողներին կ'մնայ վերջնականապէս երես դարձնել նրանից, և ճշմարտութիւնն ու փրկութիւնը ուրիշ տեղ որոնել:»

Իսկ այդ գրքուկից առաջ, այն է, 1908 թ. Դուք ձեր «Բաբելոն և սուրբ գիրք» հրատարակութեան մէջ, այլիմա տրամադրութեամբ ձեր ներքին մարդը յայտնած էք ընդհանուրի առաջ: Այն է, կամենալով ծանօթութիւն ներկայացնել մարդիկներին, տիեզերքի որ և աշխարհի, ստեղծուելու մասին, աւելի հնագոյն միջոցներով, բան թէ, Աստուածաշունչն է պատմում, զրոււմ էք, իբրեւ թէ՝ Բաբելոնական և Սեմական առասպելաբանութիւնների մասին, հետեւելով Բեիարի որդիներին, ուրացողներին. որով և ներկայացնում էք Աստուածաշունչ սուրբ գիրքը հիմնուած այդ առասպելաբանութիւններով. ուրեմն մարդահնար, և ոչ Աստուածային յայտնութիւն: Եւ ա-

սում էք «Բաբելոնի և Իսրայէլի առասպելները նմանութիւնը ակներև է բոլորովին:.. Եւ թէ՛ «Այն ինչ հասկանալի են դառնում, եթէ ասենք. թէ՛ առասպելը ծագել է Բաբելոնում, և Իսրայէլացիք այն տեղից փոխ են առել:»

Իսկ Մարգարէական գրածներն ևս համարում էք «Բանաստեղծութիւններ» և ոչ Աստուածային յայտնութիւն և հրամաններ:

Դուք հրապարակ էք մտնում իբրև վարդապետ ոմն, ուրեմն, ձեզ յայտնի է, որ քրիստոնէական եկեղեցին, ուրեմն և հայոցը՝ հիմնուած է Աստուածաշունչ սուրբ գրքով բովանդակապէս, հին և նոր կտակարանով. իսկ Աստուածաշունչ հին կտակարանը ուրանալով, ուրացած կ'լինիք և նոր կտակարանը. ուրեմն և քրիստոնէական եկեղեցին, ուրեմն և Հայոցը:

Ապա ուրեմն. ի՞նչ իրաւունքով, կամ ի՞նչ դատողութիւնով ձեզ ձևացնում էք ցանկացող վերանորոգութեան եկեղեցւոյ, և միջամտում էք՝ որ և պահանջում էք որ ձեր կամեցածներն կատարեն, և անշուշտ կատարեն, մինչդեռ եկեղեցին ձեր համար գոյութիւն ունեցող չէ:

Այդպիսի ցանկութիւն և պահանջ, այդպիսի համոզմունքի տէրից, ընդդէմ են անտարակոյս ուղիղ դատողութեան և իրաւունքի. եւ անթոյլատրելի:

Այդ է իմ պատասխանը, ձեր պատասխան պահանջելու հանդէպ:

Սակայն և հարկ համարեցայ դարձնել ուշադրութիւն և ձեր գրածների պահանջների և նպատակի վրայ, որոց մասին և խօսիլ, խնդրելով և ընթերցողների ուշադրութիւնը:

Ա. ԳԼ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Յօդւած. 13. Ա. Դուք սկսում էք խօսիլ ներկայ Հայ Ժողովրդի, և Հայ հոգևորականաց ներհակ տրամադրութեան համար, կրօնի մասին: Եւ ձեմարանի վարչութեան մասին, զանազան ենթադրութեամբ: Եւ Հայոց Հայրապետների ղեկավարութեանց մասին: Եւ համարում էք հաճոյական միմիայն այն, որ ձեմարանը տուած է, շնորհիւ մի քանի վարիչների, բաւական թուով հոգևորականներ, թէ ամուսնաւոր, և թէ կուսակրօն, որոնց անուանում էք «Ժամանակակից գաղափարների տէր, և նոր ուղղութեան ջերմ կուսակից...» Եւ ասում էք թէ, «Հայոց եկեղեցու հին յաջորդական վարդապետութիւնը կարելի է ասել՝ այստեղ վերջանում է. և նոր տեսակ վարդապետութեան հիմն է դրվում:» Եւ թէ, «Դրանով պատրաստուում էր հետզհետէ հնի և նորի վրէլը Հայոց եկեղեցու մէջ:» Եւ թէ, «Եթէ բարեպատեհ հանգամանքները շարունակած լինէին, մենք այսօր ուղիղ ճանապարհի վրայ կ'լինէինք դէպի Հայ Ժողովրդի և Հայոց եկեղեցու վերանորոգութիւնը:»

Եւ որով ևս յայտնում էք ձեր համակրութիւնը դէպի նորերի գործունէութիւնը. այն է, վերացնել Հայոց եկեղեցւոյ հին յաջորդական վար-

դապետութիւնը. և նոր տեսակ վարդապետութեան հիմք դնել, որին և անուանում էք «Եկեղեցու և ժողովրդի վերակենդանութիւն»:

Սակայն անծանօթ ուսմունք չէ այդ: Այդպիսի գաղափարներին ծառայելը նշանակում է թշնամանել և եկեղեցուն և ազգին: Որովհետեւ եկեղեցւոյ հաստատութեան հիմքը նորա վարդապետութիւնն է. նորա ընդունած Դաւանութիւնը Ս. Աւետարանով: Իսկ ազգի գոյութեան յարատեւութեան հիմքն ևս եկեղեցին է, որոնք պէտք է միան անձեռնմխելի, ներքին և արտաքին թշնամիներից. բայց որ արհամարհանաց ենթակայ էք ցոյց տալիս իւրայիններից: Եւ համարում էք, ըստ խօսից, հաւանելի և համակրելի այն բանը, որ աւերիչ է. և որ հեռի է ուղղութիւնից և իրաւունքից:

Եւ առարկելով, աւարտող և հոգևոր կոչումն ընդունող ճեմարանականաց նպատակի և գործերի մասին, եկեղեցւոյ հին յաջորդական վարդապետութիւնը վերացնելու, և նորա տեղ նորը դնելու պատճառաւ, յայտնում էք, այնպիսի գործունէութիւն ճեմարանի կողմանէ, որ յոյժ ցաւալի է, և ընդդէմ իրաւանց:

Եկեղեցւոյ վարդապետութիւնը, ինչպէս սասացինք, դաւանական կրօնական է: Դրանով է մարդը՝ մարդը, և ազգը՝ ազգ:

Այդպիսի ուսումն և հրահանգ, որ գայթակղեցնում է և մեղաւորացնում է անմեղներին, դատաստանական է համարում Ս. Աւետարանը: Եւ աղէտը համազգային է. թիւր օրինակով և կեանքով

քով կ'տարածուի և կտիրէ գայթակղութիւնը, և կ'հեռացնէ մարդը Աստուծոց, որին և կ'հետեւին անխուսափելի պատիժ և կորուստ, ըստ օրինակի նոյնպիսի ազգաց:

Ասած է, «Այս խորհուրդ է, զոր խօսեցաւ Տէր՝ ի վերայ ամենայն տիեզերաց»: Ես. ժդ. 26:

Եւ նոյնպէս, «Ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ»: Եբր. ժ. 31: Ճեմարանը թող չ'պարծի. և իրան իմաստուն և վստահ չ'համարի Աստուծոյ յայտնութեան, և համաշխարհային փորձի հանդէպ: Ճեմարտութիւնը և փորձը արհամարհել կ'նշանակէ սիրել մահը և կորուստը:

«Եւ Տէր զիւրաւ ընծայեցոյց զճանապարհս նորա... Եւ ասէ ցմարդ, Ահա, Աստուածապաշտութիւն է իմաստութիւն. և մեկնել ի չարեաց է հանճար»: Յոբ. իր. 23:

Այս է ձայն ողբացող սրտի:

Յօդ. 17. Բ. Ասում էք «Արդարութիւնը պահպանած լինելու համար, այս տեղ պէտք է յիշենք, որ մեր նոր մտաւորականների մի խումբ էլ կայ, որ աշխատում է եկեղեցական կրօնական խնդիրներում ըստ կարելւոյն մեծ ազդեցութիւն ձեռք բերել, և այդ խնդիրը լուծել, որքան կարելի է, հակառակ եկեղեցական և կրօնական պահանջներին: Դժբախտաբար, այդպիսիների նպատակն է, և այդ իրենք էլ չեն ծածկում, կրօնի և եկեղեցու ազդեցութիւնը բոլորովին թուլացնել և ոչնչացնել: Իսկ այդ նպատակին հասնելու համար, նոքա իրաւամբ կարծում են, որ ամե-

նայաջող ճանապարհը եկեղեցական գործերի մէջ խառնուելը, և հակառակ եկեղեցու ոգու և շահի վճռելն է: Զարմանալի է միայն, ինչպէս վերէն էլ ակնարկեցինք, որայնպիսիների հետ միացած են, գիտակցաբար, թէ անգիտակցօրէն, Հայ ստորին և բարձրագոյն հոգևորականութեան մեծագոյն մասը:»

Այդ ասումէք բայց չէք մտածում, որ այդպիսի վարմունքը յայտնում է այդպիսի վարուողի աններելի մոլորութիւնը կրօնի մասին, և անգոսնելի եղանակը գործելու մասին, դատապարտելի կեղծաւորութիւնը: Զարնալատակի համար, չարաշար միջոց:

Եւ դուք, փոխանակ մեղադրանքի, և անարգելու նոցա գործը և գործելու եղանակը, համարում էք նոցա արարմունքը և կարծիքը, իրաւացի: Ո՛չ ապաքէն այդպիսիները կրկին պատժոյ արժանի են, թէ հոգևորական և թէ աշխարհական, իւրեանց կրկնակի մեղաւորութեամբն, ընդդէմ եկեղեցւոյ, և ընդդէմ արդարութեան:

Յօդ. 16. Գ. Եւ ան ա՛ն ձեր ներկայ վարմունքն ևս այդպէս է. կրօնի անունով զինուել կրօնի դէմ: Ասում էք, «Բայց ի՞նչպէս է որ հայ ժողովրդի կրթուած դասի մեծամասնութիւնն էլ կամ անհաւատ է, կամ բոլորովին անտարբեր կրօնական խնդիրներում»: Եւ դորան պատճառ էք համարում հայերի ունեցած յարաբերութիւնը եւրոպացիների հետ, ուստաց տիրապետութիւնից յետոյ այս երկրին: Ասում էք «Մինչև այսօր էլ

չափազանց մեծ է նրա ազդեցութիւնը մեր նոր սերնդի վրայ:»

Սակայն մեր ազգի մէջ տարածուած այդ հոգեկան հիւանդութիւնը, անհաւատութիւնը՝ տարածուած է մեր մէջ, առաւելապէս, և արդէն իսկ ևս տարածում է ընդհանրապէս, նոյն իսկ մեր ազգային ուսումնարանաց միջոցաւ, ամենուրեք, մեր նոր երիտասարդ մոլորեալ ինքնահաւան սերնդի ջանքերով: Եւ այդ Ներսիսեան ուսումնարանի և Գէորգեան Ճեմարանի սկզբնաւորութեան ժամանակներից սկսեալ և տարածեալ, նոյն իսկ հիմնադիր Ներսէս կաթողիկոսի և Գէորգ կաթողիկոսի օրերով, որի մասին, սրբաւի վշտով զրած ունին կոնդակներ, թէ Ներսէս կաթողիկոսը, որ կայ տպուած Աղէքսանդր Երիցեանի պատմութեան մէջ, և այլուր 1869, ի Պօլիս, հրատարակութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Հ. Զ: Եւ թէ Գէորգ կաթողիկոսը, որով պատուիրում է Աստուածաշտութիւն նոյն Ճեմարանին, որ և պահուած է նորա (Ճեմ.) մատենադարանում:

Եւ այդ բանը, «ուսումնարանների զեղծումը, գաղտնի պահելու գործ ևս չէ: Եւ գործողները արդէն յայտնվելու համար են գործում: Զի՞ք ինչ ծածուկ որ ո՛չ յայտնեցի:

Եւ զրանով կարող ենք տեսնել պարզօրէն և միւս ևս ներքին յատուկ պատճառը անհաւատութեան, մեր մէջ: Եւ այդ է Հայի, թէպէտ ոչ ընդհանուրի՝ անխորհրդային դիւրահաւանութիւնն՝ ի չարիս և հետևողութիւնն մտաւոր

պակասութեանց Եւրոպայի մոլորեալ և ուրացող դասի, և հետեալաբար նոցա մոլորակաւնապատակներէ:

Բայց սակայն, այդ ընթացքով, ազգայիններն չգիտեն որ ազգի համար չարիք են պատրաստում, գործելով ընդդէմ արդարութեան: Ասած է. Ազգի անիրաւի չարաչար կատարած:

Բ. ԳԼ. ԿՐՕՆԱԿԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ ԱՄԵՆՈՒՐԼՔ

Յօդ. 17. 18. Գ. Ասում էք «կրօնի ձգնաժամը ընդհանուր է»: Եւ թէ՛ «Նա (կրօնը) համարվում է մարդկային ստեղծագործութիւն»: Եւ այս մասին ևս պատճառաբանում էք, թէ, «Մեր մտաւոր և հոգեւոր կեանքում այնպիսի փոփոխութիւններ են առաջ եկել, որ ընդդէմ են մտածողութեան հին եղանակին»:

Մարդկային բանականութիւնը և հոգին նոյն սահմանի մէջ են, ինչոր իսկզբանէ հետէ ստեղծագործութեան. և նոքա փոփոխութիւն կրել չեն կարող, և հակառակ չեն կրօնին:

Բայց թէ, ի՞նչէ պատճառը, որ կրօնը ընկնում է շատերի սրտից, և որ մարդիկ մտածում են հակառակ կրօնին:

Եւ ահա դորա իսկական պատճառը և յուզողը. «որ սերմանէն, զբանն սերմանէ: Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բանն սերմանի. և յորժամ լսեն զնա, զայ սատանայ և հանէ զբանն սերմանեալ 'ի սիրտս նոցա... իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցան, նոքա են, որ իբ-

րև լսեն զբանն, և հոգք աշխարհի և պատրանք մեծութեան մտանեն և հեղձուցանեն զբանն, և անպտուղ լինի: Մրկ. Գ. 14:

Եւ ահա այդպէս է յառաջ գալիս մարդկային մտքի և սրտի փոփոխութիւնը մարդկան մէջ կրօնի մասին: Իսկ դուք կարծում էք որ կրօնը կախումն ունի մտածողութեան եղանակից: Եւ այդպիսի կարծիքն է, որ ձեզ մոլորեցնում է 'ի կրօնականս և 'ի հոգեւորս:

Կրօնը Աստծուց հրամայուած և հաստատուած է մարդկան համար: Նա մարդկային մտքի փոփոխութեան և մտածողութեան եղանակի չի ենթարկուի, և չի այլայլի: Ճշմարտութիւնը յաւիտեան անսասան է:

Եւ ձեր մտաւոր և հոգեւոր կեանքի փոփոխութիւններն, սնոտի յուսով ձեզ զինում են նորա դէմ:

20. Ե. Ասում էք «Երբ քրիստոնէութիւնը հանդէս եկաւ, իւր առաջ գտաւ մի յոգնած, և իւր կարողութիւնները վրայ կասկածող և յուսահատուած մարդկութիւն: Բնական էր որ քրիստոնէութիւնը... այդ ժամանակի բնորոշ գունաւորումն ստանար... և առաջ եկաւ մի կողմից կազմակերպութիւնն ու հեղինակութիւնը, եկեղեցի. միւս կողմից ստորադասութիւնն ու հնազանդ բարեպաշտութիւնը, ժողովուրդը»:

Եւ այդպէս խօսելով արդէն դուք համարում էք քրիստոնէութեան հաստատութիւնը, եկեղեցի և ժողովուրդ, հետևանք նոյն ժամանա-

կի յոգնած և իւր կարողութեան վրայ կասկածող և յուսահատուած մարդկութեան հնազանդութեանը. եւ ոչ թէ իւր հեղինակութեան, և արդարութեան և ճշմարտութեան վրայ հիմնուած: Հետեաբար ուրեմն, ոչ Աստուածային:

Եթէ այդ այդպէս լինէր, ուրեմն ինչպէս է, որ նոյն սկզբնական անփոփոխ քրիստոնէութիւնը իշխող է աշխարհիս մէջ և այսօր ևս, նոյն հիմունքով և վարդապետութեամբ և դաւանութեամբ, ինչպէս որ սկսուած է և յայտնուած է, իւր գոյութեամբն և հոգւովն, երբ արդէն մարդկութիւնը ոչ յոգնած է, և ոչ իւր կարողութիւնների վրայ կասկածող, և ոչ յուսահատուած, շատ դաւերից ՚ի վեր: Ասած է Վեթէ ես բեեղզբուղաւ հանեմ զդես, որդիքն ձեր իւ հանիցեն. վասն այնորիկ, նոքին եղիցին ձեր դատաւորք,» Մտ. ԺԲ. 28:

Եւ նոյնպէս, դուք որ այդպէս էք համարում, ինչպատճառաւ ապա, ընդունում էք նորա քարոզները ձեր կազմելիք կրօնին հիմք. և խօսումէք նորա դրօշակի տակից. որովհետեւ ձեր համարման համեմատ, նա պիտի լինի խորշելի և ոչ համակրելի:

Սակայն, Քրիստոնէութիւնը նախասահմանաբար ուղարկուած է Աստուծոց աշխարհ, աւետելու և յայտնելու աշխարհին յաւիտենական կենաց խորհուրդը. եւ հաստատելու Աստուծոյ պաշտութեան մէջ: Եւ մարդկութիւնը, իւր ընտրող բանականութեամբն և սրտի ուրախութեամբ հնազանդած է նրան, ուղղութեամբ հոգւոյ: և

Լի մայ հնազանդ նրան և անբաժանելի յաւիտեան: Որովհետեւ Աստուածային տնօրէնութիւն է. և ոչ մարդկային կամքի գործ: Եւ այդ իսկ է, որ նորան հնազանդ են, թէ իւր հաւատարիմներն, և թէ ընտանի թշնամիներն: Ապա ուրեմն, ձեր այդպիսի մեկնաբանութիւնը, քրիստոնէութեան համար, անհիմն է և սխալական և հետեաբար, զրպարտութիւն, թէ քրիստոնէութեան, և թէ քրիստոնէից դէմ:

21. Զ. Քրիստոնէական եկեղեցւոյ ընդունածները և հաստատածները համարելով անբաժանելի, հրաշալի, և կախարդական, հետեցնում էք ասել, թէ. «Մեզ յայտնի է, որ նոր ժամանակում այդ բոլորը փոխուել է: Այժմ տիրող ձգտումն է աշխատանքի և գործունէութեան զուարթ ցանկութիւնը, յառաջագիմութիւնը. անկախութիւնն ու պատասխանատուութեան զգացմունքը:» Եւ թէ, «հինը մեզ միայն անցեալից մնացած անպէտք, գինը կորցրած ժառանգութիւն է երևում:»

Որով կամենում էք ասել, որ կրօնը, եկեղեցին, ձեր ներկայացրած տիրող ձգտման առաջ աշխատելու պէտք չունի, իբրեւ գինը կորցրած: Եւ ընդամին, հարկաւոր էք համարում ընդունել նորատեղ աշխատանքը, յառաջագիմութիւնը. և անկախութիւնը:

Արդէն յայտ յանդիման է, որ եկեղեցին իւր պաշտօնն ու պարտաւորութիւնն ունի. իսկ աշխատանքն ու գործունէութիւնն ևս իւրեանց տեղն ունին: Մէկը միւսին խանգարողներ չեն. իւրա-

քանչիւրն, այն է եկեղեցին և աշխատանքն ուրոյն ուրոյն գործողներ են. և կարող են շարունակուել անկախօրէն միմեանցից: Ուստի, ի՞նչ է պատճառը որ ցանկանում էք խանգարել կրօնը, որ աշխատանքն յաջորդէ նրան: Յայտ ուրեմն է, որ ձեր նպատակը կամենում է գործել միմիայն կրօնի դէմ: Կրօնը զինը կորցրած չէ, թէպէտ ձեզ այդպէս է թւում. նա նման է «Գանձի ծածկելոյ յազարակի, զոր գտեալ մարդոյ, երթեալ վաճառէ զամենայն ինչ զոր ունի. և զնէ զազարակն զայն»:

Հաւատացեալ սրտերում թագնուած են անգին գանձեր, հաւատով. և մարդիկ չեն կարող կողոպտել: Իսկ անհաւատ սրտերը թափուր են, և չունին իրանց մէջ անգին գանձեր: Որովհետև չարը կողոպտած է: Որով յայտ է որ ձեր աշխատութիւնը անավաստակ աշխատութիւն է և անպտղաբեր, իբրև կրօնախնդրական:

22. Եւ կրօնի բարեկամ ձեռնալով, նորա անկման վերաբերութեամբ ասում էք. «Ծանր ճգնաժամից յաջողութեամբ դուրս գալու միակ ելքն այն է, որ մենք կարողութիւն ունենանք, հին քրիստոնէական անկանգնելի կերպով խորտակուած աշխարհայեացքի փոխարէն նորը կազմել, արդի ժամանակի պահանջների և հասկացողութեան համաձայն»:

Եւ ահա պարզաբանում էք ձեր փափագելին, ներքին նպատակը, խափանել եկեղեցական կրօնը, և նորա տեղ հաստատել նորին չ' կրօն,

արդի ժամանակի պահանջներին և հասկացողութեանը համաձայն:

Բայց սակայն կրօնը խափանելու ոչ մի իրաւացի պատճառ ցոյց չ'տուիք, բացի արհամարհանքից: Եւ ոչինչ պատճառ ևս չունիք ի հարկէ, այդ մասին, բացի ատելութիւնից: Իսկ կրօն փոխելու ևս ոչ ոք իրաւունք չունի. որովհետև, կրօն հաստատելը մարդոյ գործ չէ. նորա ընծայողն Աստուած է: Եւ մարդոյ կամքով չ'է կարող գոյանալ կրօն: Հերձուածներ կարող են տեղի ունենալ, բայց, ոչ կրօն:

Նաև յայտնի է, որ նոր ժամանակի ձեր ցոյց տուած պահանջներն և հասկացողութիւնը կրօնի հետ չեն կարող մասն ունենալ, լինելով հակակրօնականներ, ինչպէս, նախորդ յօդուածով յայտնեցինք: Եւ նոքա ոչ միայն ընդունելի չեն, այլև են անյիշելիք: Եւ ի՞նչ իրաւունք ունիք հրաւիրել այնպիսիները եկեղեցւոյ բեմը:

Ո՛չ ձեր բարեկամութիւնն և օժանդակութիւնն է հարկաւոր կրօնին, և ոչ ձեր ցոյց տուած հակապատկեր օժանդակները: Ձեր առաջարկը յիշեցնում է աշխարհիկ առածը կրօնի մասին «Բնիր, քնիր, աչքերդ հանեմ»:

Ճգնաժամ էք երևակայում կրօնի համար. սակայն կրօնը ճգնաժամ չունի: Նա անսասան է յաւիտեան, պատկանելով Աստուածապաշտութեան. և Աստուած պաշտպան է կրօնին, որովհետև, տնօրինողն ինքն է:

Եւ ձեր ասածը անհիմն է, թէ նա անկանգնելի կերպով խորտակուած է: Թէպէտ, խորտա-

կուած է անհաւատների սրտերում, որոնք զրբ-
կուած են նրան կրելու և ճանաչելու ընդունա-
կութիւնից. բայց հաստատուն է հաւատացեալ-
ների սրտերում, ինչպէս ասացինք: Եւ անհա-
ւատութիւնը անգոր է հաւատոյ հանդէպ:

Ճգնաժամը կամ կորուստը, կրօնից բաժա-
նուող մարդկան և ազգերի համար է, որ չեն
կարող ապրիլ առանց կրօնի, այլ կ'մատնուին
մահուան:

Վայ ձեր կոչումն սնոտի է, և չ'է կարող
դրդել հաւատացեալներին, թողուլ կրօնը քրիս-
տոնէական և ազնապիշ լինիլ նոր չ'էական կրօնի:

Կրօնը միակ է, և ունի միակ նպատակ, այն
է ծառայել Աստուածաշնորհութեան, իսկ երբ
մարդիկ չեն ծառայում Աստուածաշնորհութեան,
և հրաժարվում են Աստուածաշնորհութեան կրօ-
նից, այդ ժամանակ մնում են անկրօն: Իսկ, համ-
հրաժարուիլ կրօնից համ ձգտիլ ունենալ կամա-
յական կրօն. այդ զարտուղի է և երեւակայա-
կան: Ուր չ'կայ Աստուածաշնորհութիւն, չ'կայ և
կրօն: Անգոյութեանը չէ կարելի վերադրել էութ-
իւն: Ստութիւնը չէ կարող փոխանակել ճշմար-
տութեան: Եւ ոչ կարող է կատարել նորա գործը:

22. Բ. Ասումէք «Այդ նոր աշխարհայեացքի
հիմքը անշուշտ պիտի լինի Յիսուսի քարոզը
մարդկան ընդհանուր եղբայրութեան, և Աստուծոյ
որդիներ լինելու մասին:»

Սակայն Յիսուսի քարոզութեանց մէջ չ'կայ
այդպիսի հրահանգ, մարդկան ընդհանուր եղբայ-

րութեան կամ, Աստուծոյ որդիներ լինելու մա-
սին, ինչպէս դուք էք կամենում հասկացնել:
Կարող էիք բնագիրը մէջ բերել:

Կրօն հաստատելու մասին խօսելով, հարկ է
ասել, որ Յիսուսի քարոզութեան խորհուրդն է,
ոչ թէ ընդհանուր եղբայրութիւնը մարդկան.
այլ ծառայելն Աստուածաշնորհութեան, և ընդու-
նիլն խորհուրդն յաւիտենական կենաց:

Այդ է հիմքն քրիստոնէական կրօնի, որ ձեր
ասածը չ'ունի, ուստի և հեռի է հոգուցն քրիս-
տոնէութեան, և կրօն լինելուց:

Եւ ասում էք «Շէնց էդ պատճառով էլ, ո-
րովհետեւ մէջ տեղն ընդհանուր նպատակ կայ,
և բոլոր ուժերը պիտի միանան այդ նպատակն
իրագործելու համար...: Իսկ այդպիսի ընդհա-
նուրին միացնող կապը չի կարող լինել ՚ի հարկէ,
հին ժամանակի անցած գնացած աշխարհա-
յեացքը. այլ պիտի լինի բնականաբար, նորագոյն
ժամանակի գիտական ըմբռնումը տիեզերքի, Աս-
տուծոյ, և մարդոյ մասին:»

Եւ թէ՛ «որովհետեւ կեանքը տանջանք է,
աշխարհը դառնութեան և վշտի հովիտ. իսկ քրիս-
տոնէութեան բոլոր ոյժերի միահամուռ գործու-
նէութեան նպատակը պիտի լինի վերացնել տան-
ջանքի խայթոցը մարդկային կեանքից. արցունքը
սրբել բոլոր դէմքերից, և դառնութեան ու վշտի
հովիտը, Աստուծոյ ուրախ դուարթ որդիների
ընդհանուր աշխատանքով... երջանկութեան պար-
տէզի փոխել:»

Եւ ահաւասիկ, ձեր բուն նպատակը և խոր-

հուրդը բովանդակում էք սրանում ամբողջովին:

Դուք համարում էք կրօնին հպատակ կեանքը տանջանք մարդկանց համար, որով ևս, աշխարհը վշտի և դառնութեան հովիտ: Եւ կամենում էք իբրեւ մտաւոր ոմն, ձեր և ձեր նմանների միահամուռ գործունէութեամբ, այդ տանջանքը և դառնութիւնը վերացնել մարդկային կեանքից, և պարգեւել նրանց երջանկութիւն: Սակայն ընչով, ի՞նչ ճանապարհով:

Ահա այս գծերով. մերժելով հին ժամանակի անցած գնացած կրօնը. և նորա տեղ դնելով, նորագոյն ժամանակի գիտական ըմբռնումը տիեզերքի, Աստուծոյ, և մարդոյ մասին:

Ապաքէն յայտ իմն է, նաև ձեր ասածներով, որ նորագոյն ժամանակի գիտական ըմբռնումն ուրանում է և կրօն, և հաւատ, և Աստուածաշատութիւն, ուրեմն և Աստուածային օրէնքները:

Եւ ուրեմն, դուք համարում էք, և ըստ այնմ ևս հրապուրում էք, որ մարդկային երջանկութեան համար, մարդիկ ընդհանրապէս, պէտք է ապրեն անհաւատ և առանց դաւանութեան, և առանց Աստուածային օրինաց:

Սակայն կրօնը մարդիկներին Աստուծոյ հրամանով ուսուցանում է իրաւունք և արդարութիւն և օրէնք կենաց: Իսկ եթէ մարդիկ մնան անհաւատ և չ'հպատակեն այդ պարտաւորութիւններին, ընչով կարող են գտնել երջանկութիւն մարդկային կեանքի համար:

Ո՞չ ապաքէն, Աստուած իւր օրէնքները տուած է աշխարհին մարդկային երջանկութեան,

և խաղաղութեան, և բարւոք կենցաղավարութեան համար: Եւ իւր առաջին արդարանալու համար:

Ուրեմն ձեր կազմած նորագոյն կրօնքից, որ չունի իւր մէջ Աստուածային օրէնք, կ'հետեւին, փոխանակ երջանկութեան՝ ոչ միայն տանջանք և արտասուք, այլ և, մահ և կորուստ. ոչ միայն վիշտ և դառնութիւն՝ այլ և արիւն և հուր և մրրիկ ծխոյ: Որպէս և գրեալ է ճշմարտայն ինչ խառն 'ի խուռն: Արիւն և սպանութիւն, գողութիւն և նենգութիւն. Ապականութիւն, անհաւատութիւն, խռովութիւն. . . Իմս. ԺԴ. 15:

Եթէ կրօնի հպատակութեամբ, անվախճան են աշխարհիցս մեղք և չարիք միմեանց դէմ. ուրեմն ո՞վ կսանձէ մարդկութիւնը այնուհետև, երբ կվերանայ նրանցից հպատակութիւնն կրօնի և երկիւղն Աստուածային:

Ուրեմն դուք մարդկութեանը փոխանակ հանգիստ պարգեւելու, փուշ և տառասկ էք տարածում նորա առաջին, ըստ հետեւանաց ձեր կազմած կրօնի: Եւ այդ յայտնի է աշխարհային ներկայ կեանքով ևս, անհաւատներով:

Ուստի ձեր նպատակը և խորհուրդը պատիժ են աշխարհի համար. և ընդունայն:

Իսկ այն գիտական ըմբռնումն տիեզերքի, Աստուծոյ, և մարդոյ մասին, որը դուք ընտրում էք ձեր կրօնի համար հիմք, ծնունդ է անգիտութեան և մոլորութեան. որովհետև, նա ոչինչ մասն չունի հոգևորի հետ. նորա ամբողջ գիտեցածը մարմնաւոր է. իսկ Աստուածածանօթու-

Թիւնը ստացւում է հոգևոր խորհրդով և հոգեւորով. ուստի չէ կարող Աստուծոյ մասին հետեւել ճշմարտութեան. քանզի, Աստուած ինքն Հոգի է: Վասնորոյ, այդ ըմբռնումին հետեւելը կ'հնգացնէ մարդոյն և Աստուծոյ, և հաւատից, և մարդուց և տիեզերքից:

Իսկ երբ դուք այդ գիտական ըմբռնումն գերադասում էք, կրօնական դաւանական յայտնութիւնից, Աստուծոյ, տիեզերքի, և մարդոյ մասին, ինչու նրան հրապարակ չէք հանած, որ ուրիշներն ևս կարողանային տեսնել նորան և ճանաչել: Բայց գրած է «Եւ որ ոչ սիրէ զճշմարտութիւն, ոչ գայ առ լոյսն. զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա»:

Եւ այդպիսութիւնով, ձեր նպատակն է ենթարկել արհամարհանաց քրիստոնէական եկեղեցւոյ դաւանութիւնը, և աշխարհի համար ստեղծել նոր դիւական կրօն: Սակայն ձեր գրքոյկը անուանած էք «Հայոց եկեղեցւոյ վերանորոգութեան խնդիր»:

25. Թ. Ասում էք «Քրիստոնէութիւնը քաղաքակրթական կրօն է. Այսինքն, Նա առաջ չէ եկել միայն կրօնական զգացմունքի ընդհանուր և բնական մոտիւններից. այլ այդ զգացմունքի և ժամանակի ամբողջ քաղաքակրթութեան ամենազլխաւոր «Գործօնների» միմեանց հետ ունեցած փոխադարձ յարաբերութիւնից»:

Քրիստոնէութիւնը, քաղաքակրթութեան «Գործօնների» միմեանց հետ ունեցած փոխա-

դարձ յարաբերութիւնից առաջացած կրօն չէ: Այդ զրախօսութիւն է թէ Քրիստոսի դէմ, թէ քրիստոնէական կրօնի դէմ. և թէ քրիստոնէից դէմ: Նա նախասահմանութեամբ տնօրինուած է Աստուծոյ կամքով, և կատարուած Յիսուս Քրիստոսի ձեռքով, նորա անձնական քարոզութեամբն, որ է սուրբ Աւետարանը. և նորա Առաքելոց անընդմիջական քարոզութեամբն: Ուստի, ոչ թէ քաղաքակրթական կրօն է նա, այլ «Տնօրինական»:

Եւ այդպիսի դատողութիւնը արդէն ապացուցանում է, որ դուք քրիստոնէական կրօնի վրայ ուղիղ սիրտ և ուղիղ գաղափար չունիք, որով և մոլորեցնում էք ուրիշներին. բայց և այնպէս կամենում էք գործել նորա անունով, և խօսում էք յատուկ նորա անունով անպատշաճօրէն: Եւ պարտաւոր էք, ինքներդ ձեզ նկատել, իբրև յանցաւոր, այն մասին որ չէք խորշում, Աստուծոյ տնօրէնութեան գործը համարել քաղաքական հանգամանքներից յառաջացած գործ. որ և է չափազանց անձնավստահութիւն:

Գ. ԳԼ. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԾ ԺԳՆԱԺԱՄԻ ՀԱՆԴԵՊ.

31. Թ. Ասում էք, «Իսկապէս ասած, քրիստոնէական կրօնի մէջ չ'պէտք է լինի առանձին դասակարգ, առանձին գործունէութեամբ հոգեւորականութիւն»: Որ իբր թէ, քահանայն մի միջնորդ է լաւ տրամադրել, որ և իցէ միջոցներով, այս կամ այն աստուծոն, դէպի մի անձնա-

և որով թիւն կամ գործ»։ Բահանայութիւնը չէ ճանաչած այլ և այլ աստուածներ, ինչպէս ասում էք. այլ ինքն Աստուած կարգած է քահանայութիւնը, ճշմարիտ Աստուածպաշտութեան ծառայելու համար։

Եւ յայտ է ապաքէն, որ կամենալով վերջացնելով քահանայութիւնը, կամենում էք վերջացնել Աստուածպաշտութեան պարտաւորութիւնները միանգամայն, և դաւանութիւն և կրօն և հաւատ։

31. Ասում էք «Եթէ այժմ բոլոր քրիստոնէական եկեղեցիներում, ուրեմն, նաև մեզանում հոգևոր զինուորութիւն կայ, այդ ոչ եթէ իդէալ պէտք է համարել, քրիստոնէական հասկացողութեամբ, անկողմն այդ իդէալից, դէպի որը դառնալ անհրաժեշտ է»։

Սակայն, ռիպիսի քրիստոնէական հասկացողութիւն կարող էք ցոյց տալ, որ հակառակ լինի քահանայութեանը, հոգևոր զինուորութեանը։ Ո՞չ ապաքէն, սարկաւագութիւն, երիցութիւն, եպիսկոպոսութիւն գործում էին նոյն իսկ առաքելոց ժամանակ։

32. Եւ հետեւեցնում էք, «Ուրեմն միայն ընդհանուր քահանայութեան սկզբունքն է ճշմարիտ քրիստոնէութեան համար»։ Եւ յայտ է ապաքէն, դրանով ցոյց էք տալիս, որ իւրաքանչիւր անհատ պէտք է համարուի քահանայ. և ուրեմն վերջանում է ժողովրդականութիւնը, և ամբողջը կազմում է քահանայութիւն։ «Սյդպիսի կարգադրութիւն չի պատկանի քրիստոնէական եկե

ղեցւոյն։ Իսկ եթէ խօսում էք, ձեր որոշ համայնքի վերաբերութեամբ, այդ նորան կ'ալաւաճի, ինչպէս աշխարհիկ առածն է ասում, «Ի՞նչ խնդրան, ի՞նչ իր ծաղիկ»։

32. ԺԱ. Ասում էք, «Այժմեան ամբողջ հոգևորականութիւնը միայն մի կոչում և նպատակ կարող է ունենալ, այն է, իբրև վարդապետ և աւետարանի քարոզիչ, — կրթել և զարգացնել իրեն խնամքին յանձնուած ժողովրդին, այնպէս և այն ուղղութեամբ, որ ինքը հոգևորականութիւնը, ինչպէս որ կայ այժմ, աւելորդ դառնայ ապագայում։ Այդ է ամենագլխաւորը. և մեր բոլորիս նպատակը պիտի լինի այդ գործի համար աշխատել, ուժերի չափով»։

Սակայն խորհուրդ տալ, հոգևորական կոչման մէջ գտնուողներին, մարտնչիլ նոյն կոչման դէմ՝ նշանակում է յորդոր կարգալ ծառայել ստութեան և խաբբայութեան, այն է, մարդիկներին առաջարկել այնպիսի ծառայութիւն, որ առանց այլևայլութեան պաշտօն սատանայի է. և դուք համարում էք ամենագլխաւոր գործ։

Նրանց ասում էք գործեն իբրև վարդապետ և Աւետարանի քարոզիչ. սակայն Աւետարանն ասում է «եղիցի ձեր բանն, այոն՝ այոն, և ոչն՝ ոչ. որ է ասել ճշմարտութիւն։ Իսկ ձեր խորհրդին հետևողը ի՞նչպէս կ'համարուի, իբրև վարդապետ և իբրև քարոզիչ Աւետարանի, որ լինելու է ներքինով այլ, և արտաքինով այլ, այն է Աւետարանի անունով զինուիլ ընդդէմ Աւետարանի»։

րանի, ժողովրդին գայթակղեցնելու պատճառաւ:
Ո՛չ ապաքէն կեղծիքը հեռի է ՚ի հոգւոյն Աւե-
տարանի:

Ձեր այդպիսի խորհրդատուութիւնը յայտ-
նում է, որ դուք աւետարանը համարում էք
ստուգեալ գործիք, որով և կամենում էք մե-
ղաւորացնել և ձեզ և ձեր հետեւողներին, իբրև
պատճառ գայթակղութեան: Ասած է, «Վայ ձեզ
գլխաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի յա-
ծիք ընդ ծով և ընդ ցամաք առնել եկամուտ մի,
և յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի կըր-
կին ևս քան զձեզ»: Մտ. ԻԳ. 15:

34. ԺԲ. Ասում էք «Հայոց եկեղեցին արդէն
այն տեղն է հասել, այնպիսի ողբալի դրութեան
մէջ, որից մի քայլ այն կողմը կատարեալ քայ-
քայումն և կործանումն է: Բայց բարձրագոյն
հոգեւորականութիւնը (եպիսկոպոսութիւնը) լուռ
է և անգործ. որովհետև նա անընդունակ է գոր-
ծի. նրա ուժերն սպառուած են. նրան ոգևորողը
Յիսուսի Աւետարանն ու ժողովրդի վիշտը չէ,
որովհետև, նա քայքայուած է, կազմալուծուած,
և զգացմունքով և մտքով քարացած»:

Պախարակում էք բարձրագոյն հոգեւորակա-
նութիւնը, եպիսկոպոսներին, այն պատճառաւ,
որ նա լուռ և մունջ է, այսինքն որ չէ հետե-
ւում նոր գաղափարներին և նպատակներին, հե-
տեւելով ձեզ, խանգարել հնացած եկեղեցին, և
դաւանութիւնը և պաշտամունքը, ինչպէս դուք
էք կամենում: Սակայն նոցա համար այդ վար-

մունքը, իբրև պարտականութիւն, այն է, եկե-
ղեցւոյ հաւատարմութիւնը, գովանի է և արժա-
նապատուութիւն նոցա համար. և ո՛չ թէ պատ-
ճառ պարսաւանաց:

Վասնորոյ և ձեր նախատինքը նոցա և նոյն-
պիսիների դէմ, հակառակ իրաւանց է, և արհա-
մարհելի: Նոքա կատարում են այն, ինչ որ պա-
հանջում է արդարութիւնը և իրաւունքը, և ինչ
որ պարտաւոր են կատարելու:

Եւ դուք, այդպէս խօսելու ժամանակ չէք
յիշած Քրիստոսի ասածը, կամ արժան չէք հա-
մարած յիշելու, թէ. «Ամենայն որ բարկանայ
եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի
դատաստանի: Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս,
պարտաւոր լիցի ՚ի գեհեն հրոյ»: Մտ. Ե. 22:

Եթէ Աստուած բարձի թողի արած չէ՝ եկե-
ղեցին կմնայ հաստատուն:

Իսկ եթէ խտասրտութիւնը և ապստամ-
բութիւնը կ'բազմանան հայ ազգի մէջ, որին և
հետեւում են, և մեղաց չափը կ'լցուի. այն ժա-
մանակ Աստուած բարձի թողի կ'անէ, երես կը
դարձնի. և ապա կ'հետևին՝ և կործանումն ազգի
և կործանումն եկեղեցւոյ, միանգամայն:

Եւ ՚ի դէպ կլինի այդ ժամանակ Քրիստոսի
ասածը. «Ո՛չ մնացէ այդը քար ՚ի վերայ քարի,
որ ո՛չ քակտեսցի»: Մտ. ԻԴ. 2:

35. ԺԲ. Ասում էք. Նա (քրիստոնէութիւնը)
կարողացել է ընդ առաջ գնալ բոլոր իրանից յե-
տոյ սկսուող մտաւոր շարժումներին. նրանց էա-

կան և առողջ գծերը իւր մէջ է առել. և այդպիսով աւելորդ դարձրել բոլոր նոր ուղղութիւնները, ասպարէզի վրայ մնալով միակ յաղթականը»:

Երբ կամենում էք հաւատացնել, որ քրիստոնէութիւնը այդպէս է վարուել, ի՞նչ պատճառաւ ցոյց չէք տուած և ո՞չ մի ապացոյց այդպէս վարուելու: Եթէ ունենայիք որ և իցէ ապացոյց, չէիք զլանայ ՚ի յայտ ածել:

Ուրեմն զուր էք խօսում և նպատակաւ: Եւ այդ այն է, որ կամենում էք հաւատացնել, թէ՛ քրիստոնէութիւնը ընդունած է իւր մէջ մտաւոր օտար շարժումներից, կրօններից, առողջ գծեր. ուրեմն և այժմ ևս կարող է ընդունել այդպիսի գծեր: Այդ ևս միայն այն պատճառաւ, որ կարողանաք համոզել, և տալ ընդունել կրօնի կարգում ձեր նոր մոլորական գաղափարներն դաւանութեան մասին:

Եւ սակայն, սնոտի և ընդունայնական է խորհուրդդ այդ, և պատճառանքն անհիմնական զրախօսութիւն:

Ուստի քրիստոնէական եկեղեցին ոչ առաջ առած է իւր մէջ օտարոտի գծեր և վարդապետութիւններ, և ո՞չ այժմ կարող է առնել:

Ինչպէս նա սկզբնաւորուած է, նոյնպէս և կայանարատ և անփոփոխ, նոյնպէս ևս պիտի մնայ անարատ և անփոփոխ:

36. ԺԳ. Եւ ասում էք, «Մեր կրօնական կեանքը, որ ամփոփուած է մեր եկեղեցւոյ մէջ,

մեռած է բոլորովին»:

Եւ չ'զիտէք թէ ի՞նչ էք ասում: Կենդանին, մեռած էք համարում, իսկ մեռեալը, կենդանի:

Նորութեան, նոր շարժումների մէջ ո՞չ մի կենդանութիւն չ'կայ, որը դուք ապօրինաբար կամենում էք մտցնել եկեղեցւոյ մէջ, իբրև կրօն. որովհետև այդպիսի շարժումներն հաւատոյ համար մեռած են, հեռի լինելով հաւատից: Իսկ եկեղեցւոյ կրօնական կեանքը, յաւիտենական հաւատով և դաւանութիւնով մշտնջենապէս կենդանի է: Որով ևս սխալ է ձեր ասածը:

36. ԺԵ. Ասում էք. «Եթէ Հայոց եկեղեցին պէտք է շարունակէ իւր գոյութիւնը, պէտք է կարողանայ ազդեցութիւն ձեռք բերել ժողովրդի վրայ, և նրան կրթել ու դաստիարակել, դրա համար ամենից առաջ, մեր եկեղեցւոյ Հայրապետութիւնը պիտի աշխատէ նոր հոգևորականութիւն պատրաստել: Առանց դրա մնացած բոլոր «գործերն» ու փքուն խոստումները ո՞չ մի արժէք չ'ունին, և ապացոյց են միայն այն սուկալի ներքին դատարկութեան և անբովանդակութեան, որ տիրող է մեզնում»:

Բայց սակայն, այդպէս խօսելով ցոյց էք տալիս ձեր և յամառութիւնը, և սխալմունքը, և յանցաւորութիւնը:

Յամառութիւնը. որովհետև, միմիայն ձեր համոզմունքը և մտածողութիւնն էք համարում ամենազգօնականն և հաւանելին. մինչդեռ այդպէս չէ:

Մարդիկ սխալական են. ո՞չ ապաքէն և աւելի նոքա, որոնք իրանց անսխալ են համարում:

Սխալմունքը. որովհետև, ձեր նպատակը նոր հոգևորականութիւն ունենալու, աւերիչ է գլխովին և խանգարիչ. և ո՞չ մի օգուտ չ'ունին դրանից, ո՞չ եկեղեցին և ո՞չ ազգը, նայելով նորերի գործերին, ձեր իսկ ասելով, իբրև ընդդէմներ եկեղեցւոյ դաւանութեանը, որի մասին և խօսեցինք, ձեմարանականաց պատճառաւ:

Եւ յանցաւորութիւնը. որովհետև գործ էք անում, ընդդէմ Հայրապետութեան, այնպիսի սանձարձակ և յոռի լեզու, որ դատապարտելի է ամէն կողմով. և հեռի միանգամայն խոհական մարդոյ տրամադրութիւնից և վարմունքից:

38. Նոր հոգևորականութեան մասին դուք ինքներդ բացատրում էք և ասում էք. «Կրթուած, ժամանակակից գիտութեան ծանօթ մարդը, այն ժամանակ միայն հոգևորական կ'դառնայ, երբ եկեղեցւոյ մէջ ո՞չինչ չ'գտնի այդ գիտութեան հակառակ. ուրիշ խօսքով, ամեն ինչ համապատասխան լինի իւր մեծ չարչարանքով ձեռք բերած համոզումներին: Բաց'ի այդ, իրապէս անբովանդակ ու միայն անցեալի աւանդական, այժմ անիմաստ կարգերով ու ըմբռնումներով ապրող հաստատութիւնը չի կարող զօրեղ հետաքրքրութիւն շարժել և դէպի ինքն ձգել ժամանակակից կրթուած մարդուն»:

Ուրեմն կ'հետևի ասել, որ ձեր առաջարկութեան համաձայն, Հայրապետութիւնը պարտաւոր է եկեղեցւոյ կարգերը փոխել և յարմար

ցնել կրթութեան նոր պահանջներին և համոզումներին, որոնք համարում են եկեղեցին անիմաստ կարգերով և ըմբռնումներով ապրող հաստատութիւն. կամ նոյն է ասել, վերացնել եկեղեցւոյ դաւանութիւնը և պաշտամունքը, նրանց համոզմունքին համաձայն. և ապա հրաւիրել նոր կրթութեան, որ գան և ծառայեն եկեղեցւոյն. մինչդեռ այն ժամանակ եկեղեցին ևս զրկուած պիտի լինի իւր գոյութիւնից:

Ո՞չ ապաքէն, Հայրապետութիւնը հաստատուած է լինիլ աւանդապահ եկեղեցւոյ հաստատութեանը և կարգերին և դաւանութեանը. եւ ո՞չ ապաքէն այդ մասին պատասխանատու է նա, Աստուծոյ և Ազգի և իւր խղճի առաջին:

Ուրեմն, ի՞նչպէս կարող է Հայրապետութիւնը զիջանել ի հաճոյս ձեր և նոր կրթութեան, և խանգարել եկեղեցւոյ սրբութիւնները և դաւանութիւնը, նոյն կրթութեան ընդունելու համար եկեղեցւոյ ծառայութեան մէջ:

Բայց դուք անտեսելով ամեն իրաւունք, մեղադրում էք Հայրապետութիւնը, ձեր համոզմունքներին չ'հետեւելու պատճառաւ:

Եւ կ'հետևի ասել, որ ձեր պահանջը Հայրապետութիւնից, և լուտանքը, հետևանք են անգիտութեան, և չ'իրաւախոհութեան:

Դ. ԳԼ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՆԱՆՈՒԹԵԱՆ.

36. Ժ. Քրիստոնէական դաւանութեան, և օտար տարրերի մասին խօսելով ասում էք, «Հին

յունական փրկիսոփայութեան, յատկապէս Պլատոնի և նոր Պլատոնական գաղափարների հետ ունեցած սերտ շփմամբ և անմիջական խորին ազդեցութեամբ է կազմուած հին քրիստոնէական աշխարհայեացքը. որ իւր կլասիկական արտայայտութիւնն է գրել «Հաւատոյ հանգանակի մէջ»:

Ուրեմն դուք համարում էք, որ քրիստոնէական հաւատոյ դաւանութիւնը Յունական փրկիսոփայութեան մտքերով և ազդեցութեամբ է կազմուել, ինչպէս մի քանի անգամ ևս ասացիք. սակայն, այդ զրպարտութիւն է. ոչ մի ապացոյց չունիք. և խօսում էք այդպէս:

Քրիստոնէական էական վարդապետութիւնը պատուիրում է, Հոգւով և ճշմարտութեամբ Աստուածաշտուութիւն. և յայտնում է և աւետում է աշխարհին, երկնից արքայութեան, և մարդկային հոգեւոր յաւիտենական կենաց խորհուրդը, որ յարութիւնից յետոյ, ինչպէս որ ուսուցանում է սուրբ Աւետարանը:

Իսկ այդ խորհուրդը անծանօթ է և անհաւատալի բոլոր փրկիսոփաներին, և հին և նոր, թերևս բացառութեամբ: Ուրեմն, ընչով կարող էք համարել քրիստոնէական կրօնը, և կամ, նորա Հանգանակը ազդեցութիւն փրկիսոփայութեան:

Քրիստոնէական «Հաւատոյ Հանգանակը» ներկայացնում է սուրբ Աւետարանը բովանդակապէս: Նորա մէջ չ'կայ ոչ մի դաւանաբանական խօսք, ոչ մի միտք, ոչ մի նախադասու-

թիւն, որ Աւետարանով չ'լինի: Անտարակոյս, և դուք գիտէք այդ: Ուրեմն, երբ որ նոյն հանգանակը համարում էք կազմուած փրկիսոփայութեան ազդեցութեամբ, այդ յայտնում է, որ նոյնպէս համարում էք դուք և Աւետարանը փրկիսոփայական ազդեցութիւն. որով և Քրիստոսին, և որով նորա Առաքեալներին հետևող փրկիսոփայութեան:

Ուրեմն և ի՞նչ դիտաւորութեամբ անուանում էք ձեզ ձերայիններով «քրիստոնէայ համայնք», երբ ուրանում էք քրիստոնէութեան ճշմարտութիւնը:

Այո, մեղանշում էք, և չէք հասկանում: Այդ անձնամատնութիւն է մոլեռանդական անհաւատութեան: Եւ այդ ցաւալի է, արդարև: Խնդրիր Աստծուց Պօղոսի հոգին, ուղիղն իմանալու համար: «Եւ որ խնդրէ առնու»:

44. ԺԷ. Ասում էք, «Այդ ժամանակներից ի վեր (զ. դար) ամենամեծ և կարելի է ասել աներևակայելի փոփոխութիւններ են մտել մարդկութեան մտաւոր կեանքի ընդհանուր աշխարհայեացքի (բնագիտութիւն, աստեղագիտութիւն) մէջ, խախտելով եկեղեցական ներկայ դաւանութիւնը, իւր էական մանրամասնութիւններով»:

Որով յայտնում էք, որ բնագիտութիւնն ու աստեղագիտութիւնն հակառակ են եկեղեցւոյ դաւանութեանը, Աստուածածանօթութեանը:

Սակայն, մարդկային խորհուրդը, բանականութիւնը ուսուցանում են որ ոչ մի բնագիտ-

և աստեղագէտ հանճարունակ կամ չ'նախապաշարեալ, չի մոլորութիւնով և աստեղագիտութիւնով, տիեզերական, այն է, երկրաւոր և երկնաւոր արարածոց ցոլցմունքով, գոյաւորութեամբ: Մտաւոր մարդը կ'նկատէ նոցա մէջ անշուշտ, Աստուածային գործ. եթէ չարը հանած չէ նորա սրտից խելամտելու կարողութիւնը:

Մարդկային ազատականութիւնը հետեւելով չարին հեռանում է հաւատից. եւ դորա մէջ ինչ մասնակցութիւն ունին բնութիւնը կամ աստեղները: Մանաւանդ, աստեղագիտութեան միջոցաւ, Աստուածապարգև հանճարով մարդիկ ծանօթանում են երկնաւոր մարմնաւոր արարածոց Արարչագործութեան սքանչելիքներին, և Աստուածային իմաստութեանը և ամենակարողութեանը. որով, ոչ մի մտաւոր աստեղագէտ չի ենթարկուի ձեր կարծիքին: Ուրեմն, պարտ ենք իմանալ, որ եկեղեցւոյ դաւանութեան դէմ հակառակամտութիւն և հետադարձութիւն չեն կայանում արարածոց գոյաւորութեամբն, այլ թելադրութեամբն չարի, առ հասարակ:

44. ԺԳ. Ասում էք. «Արդի նորագոյն ժամանակի քրիստոնեան իր ազատ իրաւունքն է պահանջում, աշխարհայեացք կազմելու, ներկայ գիտութեան և փիլիսոփայութեան համաձայն. և ոչ ոք նրա առաջ այդ տեսակէտից արգելք դնել չէ կարող. և ամէն արգելք կ'լինի 'ի վնաս քրիստոնէական եկեղեցու և կրօնի»:

Երբոր նորագոյն ժամանակի քրիստոնեան կամենում է աշխարհայեացք կազմել, ներկայ գիտութեան և փիլիսոփայութեան համաձայն, հակառակ եկեղեցւոյ դաւանութեանը, այդ կը նշանակէ, հեռանում, բաժանում են եկեղեցուց: Բայց եկեղեցին չէ կարող հետեւել նրանց: Այդ նորա համար կորստական է և պահանջանիրաւայի: Նոքա կարող են իրանք իրանց համար կենալ: Ուրեմն, այլևս ինչ պահանջողութիւն, և կամ, համար:

Ասած է, «Որ արհամարհելոցն է արհամարհէ. և որ անօրինելոցն է անօրինէ:» Եւ. ԻԱ. 2:

Քրիստոնէական կրօնի և եկեղեցւոյ վնասը արդէն կայանում է նոցա պահանջմունքի մէջ, և ոչ թէ նրանց չ'հետեւելու:

45. ԺԹ. Ասում էք, «Եզրակացութիւնն այն պիտի լինի անշուշտ, որ մենք պիտի կազմենք մեր քրիստոնէական աշխարհայեացքը, մեր դաւանանքը, անկախ և ազատ մնալով միանգամայն քրիստոնէական եկեղեցու պատմական դարձացման և աւանդութեան հանդէպ:»

Այդպիսի առաջարկութիւն Հայոց եկեղեցւոյ համար հերձուածողութիւն է. որովհետեւ, նա զուտ քրիստոնէական եկեղեցի է, և դաւանութիւնով, և պաշտամունքով, և օրէնքով. և կնիայ նոյնպէս հաստատուն իւր կոչման մէջ: Եւ այդպիսի առաջարկութեան վստահութիւն գործադրել նորա առաջին, նա կ'համարէ անթոյլատրելի և մեղադրական:

Ուրեմն ո՛չ մի օգուտ չ'ունիք այդպիսի հակադրոնական համակուսներին և հետամտութիւնին: Բարեոք է որ մնաք անյոյս:

47. Եւ. Ասում էք, «Եւ առհասարակ էլ սխալ է և բոլորովին անհիմն, գիտութիւնն ու կրօնը միմեանց հանդէպ հանել, իբրև հակառակ ոյժեր»:

Այդպէս էք դատում որ համոզէք յարմարցնել եկեղեցին ներկայ ժամանակի գիտութեանը. և սխալւում էք:

Կրօնը ծառայում է հաւատոյ վարդապետութեանը. և ընդունում է նորա յայտնած հոգեւոր խորհուրդները, և ճշմարտութիւնը:

Իսկ ներկայ գիտութիւնն ասացեալը, ո՛չ ապաքէն հակառակ է սպառնալու, թէ հաւատոյն, և թէ ամբողջ հոգեւորին. որով և եկեղեցւոյ դաւանութեանը: Ուրեմն, ընչո՞վ չեն նոքա հակառակ ուժեր միմեանց:

Նա ո՛չինչ մասն չունի հաւատոյ հետ, որ ունի կրօնը. և ի՞նչպէս կարող են ընկերանալ: Ասած է, «Մի լինիք լծակիցք անհաւատից. քանզի, զի՞նչ հաղորդութիւն արդարութեան, ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ, ընդ խաւարի: Կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի, ընդ բէլիարայ: Կամ, զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն, ընդ անհաւատին... Բ. Կորն. 2. 14:

Այդ գիտէք և ինքներդ, բայց այդպէս էք խօսում. սակայն գրուած է, Վա՛յ այնոցիկ որ ասիցեն զշարն, բարի. և զբարին չար. ոյք դնիցեն զլոյսն խաւար, և զխաւար լոյս:» Եւ. Ե. 20:

47. Եւ. Կրօնական գիտակցութեան, և ներկայ ժամանակի գիտութեան մասին խօսելով ասում էք. «Որովհետև, կրօնը մարդու սրտում խորապէս արմատացած այն գիտակցութիւնն է, թէ, մի յարաբերութիւն կայ իրեն և այն աննկարագրելի բարձրագոյն զօրութեան մէջ, որի տեսանելի արտայայտութիւնն է տիեզերքը»:

Որով յայտնում էք ձեր համոզմունքը կամ ուսումնի, Աստուծոյ վերաբերութեամբ: Բայց անգիտանալով Աստուծոյ մասին, ապաստանում էք, յոյժ աղօտագոյն տեսութեամբ, մի աննկարագրելի զօրութեան: Սակայն բանականութիւնը և Աստուածային յայտնութիւնը ուսուցանում են մարդոյն, չ'ճանաչել զինչ և իցէ զօրութիւն աննկարագրելի, 'ի տեղի Աստուծոյ: Այլ որ պէտք է ճանաչել միմիայն ճշմարիտն Աստուած, որ Արարիչ է երկնի և երկրի, և ամենայն զօրութեանց. և որ, նորա առաջին միայն պէտք է խոնարհիլ, և միայն նորան պաշտել:

Այդպիսի զօրութեան հետ կաշկանդել մարդկային բանականութիւնը և միտքը, փոխանակ Աստուծոյ, անտարակուսելի մոլորութիւն է, որի մասին և զգուշացրած է Աստուածային օրէնքը: «Մի եղիցին քեզ այլ Աստուածք, բաց յինէն:» Եւ. Ի. 3:

Աստուած ճանաչւում է իւր Արարչագործութեամբն: Նորա գործերն են երկինք և երկիր, իւրեանց համայն բովանդակութեամբն:

Նոքա ո՛չ միայն ստեղծուած են. այլ յատկապէս կարգաւորուած են: Նոցա մէջ տեսնում

ենք սքանչելի կարգեր, և կանոնաւորութիւններ, և հրամանակատար, կարգադրուած պաշտօնավարութիւններ, մշտնջենական հաստատութեամբ, և համանգամայն կաղմութեամբ: Եւ համանգամայն սքանչելիք:

Եւ ոչինչ տարակուսութիւն չէ կարող տեղի ունենալ, որ նոքա ամբողջապէս, ստեղծուած են ամենակարողութեամբ, և կարգաւորուած են իմաստութեամբ, և հանձարով, և խորհրդով և կամքով և տնօրէնութեամբ:

Եւ այս ևս անտարակուսելի է, որ առանց Անձնաւորութեան չ'կայ իմաստութիւն և կամք և տնօրէնութիւն: Ուրեմն, Աստուծոյ գործերն մեզ պատմում են և յայտնում են, որ ինքն Աստուած է կենդանի Անձնաւորութիւն. ստեղծող, և հրամայող և տնօրինող, իմաստութեամբ և կամքով, որ և ստեղծագործած է բովանդակ արարածները ոչընչից, հրամայելով բանիւ բերանոյ: Եւ նրանց համանգամայն զրած է կարգի և կանոնի և հրամանի տակ: Որ և նա ինքն է Արարիչ Հրեշտակաց և մարդկան: Եւ տուող օրինաց մարդկան: Եւ իրաւանց և Արդարութեան: Ուստի և անիմաստ է համարել աննկարագրելի զօրութիւն ինչ իբր Աստուած, որ անձնաւորութիւն չէ, և որ չէ կարող ունենալ իմաստութիւն և կամք:

Համայն արարածոց մէջ մարդն միայն ունի իմաստութիւն, և հանձար, և կամք, որ կարգադրում է իւր գործերը, որպէս որ կամենում է: Որովհետեւ համայն արարածոց մէջ, նա մի-

այն է Անձնաւորութիւն, 'ի պատկեր և 'ի նմանութիւն Աստուծոյ, իւր Անձնաւորութեամբն: Եւ նա միայն ունի կարողութիւն խօսելու և կամենալու, իբրև անձնաւոր, Հրեշտակներից յետոյ: Եւ Աստուած մարդոյն ստեղծած է անձնաւոր, միմիայն նորա համար, որ կարողանայ ճանաչել Աստուծոյն և պաշտել նորան, նորա տուած օրէնքներովը, և օրհնել և փառաբանել նորա ամենասուրբ Անունը, որպէս Հրեշտակներն երկնքում:

Աստուած նախասահմանած է մարդոյ համար և Հաւատ: Եւ այդ հաւատով մարդ կ'դիմէ նորա յայտնութիւններին, և կ'ճանաչէ նորան ճշմարտութեամբ. ինչպէս ինքն կամեցած է յայտնել, իրան ճանաչելու համար: Եւ ահա սոքա են նորա յայտնութիւններն.

«Եւ կոչեաց Հրեշտակ Տեառն երկիցս անգամ յերկնից և ասէ, Յանձն իմ երդուայ, ասէ Տէր, «Այո օրհնելով օրհնեցից զքեզ» Ծն. ԻԲ. 15:

«Խօսեցաւ Տէր և ասէ, Ես եմ Տէր Աստուած քո:» Ել. Ի:

«Եւ . . կարգաց «Տէր Աստուած զթած և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ: Որ պահէ զարդարութիւն և առնէ զողորմութիւն, 'ի հազար ազգս. և ոչ անպարտ առնէ զպարտաւորն...» Ել. ԼԴ. 6:

«Հոգի է Աստուած և երկրպագուաց նորա հոգևով և ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել:» Յով. Դ. 24:

Իսկ հաւատոյ հանդէպ կայ և անհաւատու-

թիւն: Անհաւատութեան հետեւողը 'ի կամս չա-
րին, կ'զրկուի շնորհքից և կարողութիւնից, Աս-
տուծոյն ճանաչելու և պաշտելու համար. վաս-
նորոյ և կ'մատնուի մոլորութեան: Եւ այդ է
կեանքն աշխարհի:

Եւ ապա ուրեմն, պարտաւոր ենք ճանաչել
Աստուծոն իւր Անձնաւորութեամբն, որի պատ-
կերը և նմանութիւնը մարդն է, իբրեւ անձնա-
ւոր, և ոչ տիեզերքն անկենդան, երեւկայական:

49. ԻՄ. Ասուած էք, «Եկեղեցւոյ և կրօնի
ծայրայեղ թշնամիները ոչ բոլորովին անիրա-
ւացի կերպով ասուած են, թէ, Հաւատ նշանա-
կուած է մի բան ճշմարիտ յայտարարել, որ ճշ-
մարիտ չես համարուած:»

Բայց այդ առածը ուղղադատութեամբ չէ
կազմուած: Ով որ մի բան ճշմարիտ չէ համա-
րուած, որ ըստ ինքեան ճշմարիտ է, նա սխալ-
ւում է: Իւր համարումն, իւր կարծիքն չեն կա-
րող իրան արդարացնել:

Անհաւատութիւնը չէ կարող իրան արդա-
րացնել հաւատոյ հանդէպ, որովհետեւ, հաւատն
Աստուած հրամայած է. իսկ անհաւատութիւնը
չար սատանէն սերմանած է:

Երբ մարդ ոք, իրաւունք և հաւաստիք չու-
նի, ճշմարիտ չ'համարել, հաստատուն հիմքով
ընդ միշտ ընդունուած ճշմարտութիւնը. նա
պարտաւոր է ընդունել նորա ճշմարտութիւնը
հնազանդութեամբ:

50. ԻՄ. Առարկելով թէ, բնագիտութեան դա-
սով աշակերտին սովորեցնում են հակառակ
կրօնի դասեր, ասում էք «Այդպիսի սոսկալի հա-
կասութեան և կեղծիքի պատճառով է, որ մենք
պահանջում ենք, բոլորի համար ընդհանուր պար-
տադիր դաւանանքը վերացնել մէջ տեղից: Եւ
այն հաստատուն համոզումն ունինք, որ կրօ-
նը դրանից փաստ չի կրէ:» Առածն ասուած է,
Արտը խախուտ, միանէն կարկուտ:»

Եթէ սիրելի են ձեզ ուղղութիւնն և օրինա-
ւորութիւնն, ապա, ինչո՞ւ չէք պահանջում, որ
բնագիտութիւնը գործ չ'դնեն շարաշար մտքով,
ընդդէմ կրօնի, և չ'դալթակղացնեն անմեղներին.
քանթէ՛ պահանջում էք, որ եկեղեցական դա-
ւանութիւնը վերացնեն: Նոյն է ասել, լոյսը
պէտք չէ, որովհետեւ, ցաւակոտոր աչեր շատ
կան:

Իսկ այն թէ, կրօնը դրանից փաստ չի կրէ,
դարձեալ հակասաբանութիւն էք անում, դար-
ձեալ խօսում էք կրօնի անունով, կրօնին հա-
կառակ: Դաւանանքը վերանալուց յետոյ, այլ ևս,
ի՞նչ կրօն կ'մնայ, որ փաստ չ'կրէ: Ո՞չ ապա-
քէն դուք խօսում էք, դաւանական եկեղեցւոյ
հետ:

Եւ հետեցնում էք թէ, «Մէկ է բոլոր ժա-
մանակների համար Աստուծոն և ընկերին սիրե-
լու կրօնական պատուէրը, այսինքն թէ, մարդ,
թէ դաւանանք ունենայ, թէ, չունենայ, կա-
րող է սիրել Աստուծոն և ընկերին. բայց չէք
մտաբերում, որ դաւանանք ուրացողը, ուրա-

նում է կանխապէս և Աստծուն և ընկերին. և այնուհետեւ, այլևս ինչպէս պիտի սիրէ:

Ե. ԳԼ. ԾԷՍ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.

53. ԻՎ. Եկեղեցական պաշտամունքը և ծէսը համարելով զանազան կրօնների խառնուրդ. և բազմաթիւ ընթերցուածները համարելով աւելորդութիւն, հետեցնում էք «որ պէտք է քարոզը, կենդանի խօսքը յաճախանայ եկեղեցութեմից. կենդրոնական նշանակութիւն ստանալով ամբողջ պաշտամունքի մէջ: Անհասկանալի և աննպատակ ընթերցումները պիտի վերանան. և ամեն ինչ կատարուի ժողովրդին հասկանալի լեզուով» Ընթերցուածները, Մարգարէական և Առաքելական գրութեան են: Նրանցով հիմնուած և հաստատուած է ինքն եկեղեցին. և չէ կարող արգելել այն ընթերցուածները, որ հիմունք են իւր համար:

Եթէ եկեղեցին այդ ընթերցուածները չ'ունենայ, ժողովուրդը կ'խոսպանանայ, և կ'անգիտանայ, և կ'մատնուի անհաւատութեան և մոլորութեան իսպառ: Թէպէտ գրաբառից սակաւ է հասկանում, դարձեալ իւր համար համակրական է. այդ սակաւն ևս իւր համար բաւարար: Մանաւանդ Սուրբ Աւետարանը, որ նորա համար սուրբ է և հոգեւոր մխիթարութիւն:

Իսկ քարոզի մասին ևս անտարակուսելի է, թէ, եկեղեցւոյ դաւանութիւնը և ընթերցուածները արհամարհողը ինչ կուսուցանէ ժողովրդին

եկեղեցւոյ մէջ: Այո, անտարակուսելի է, որ պիտի ուսուցանեն դիւաբանութիւն, ընդդէմ եկեղեցական պաշտամունքի:

53. ԻՎ. Ասում էք «Որովհետեւ, մեր մինչև ցայժմ ասածներից երևաց, որ քրիստոնէական եկեղեցի ասելով, մենք մի կրօնական համայնք ենք հասկանում, զուտ կրօնական և բարոյական սկզբունքներով, որի անդամը լինելու միակ պայմանն այն է, որ մարդ ընդունէ աւետարանական սկզբունքների վեհութիւնը, ինչպէս Յիսուսն է քարոզել:»

Սակայն, այդպիսի մի համայնքի, քրիստոնէական եկեղեցի, կամ կրօնական ասելու ոչ մի իրաւունք չունիք. որովհետեւ, այն որ եկեղեցի է, կամ որ կրօն է, նրանց յարակից և անբաժան են դաւանութիւնը և պաշտամունքը, իսկ ձեր համայնքը, ձեր իսկ ներկայացնելով, ոչ դաւանութիւն ունի, և ոչ քրիստոնէական կրօն, ինչպէս որ կրկին ևս ասում էք.

55. «Իրա համար էլ անհրաժեշտ պահանջ է, պաշտամունքը արդի մարդու հոգեկան կարիքներին համապատասխան դարձնել, . . . Անհասկանալի քարացած կարգերի, և քահանայական չոր ու ցամաք ձևերի տեղը պէտք է բռնէ պաշտամունքի մէջ ժամանակակից քրիստոնէական կրթութիւն ու գեղարուեստ, բարոյական գրականութիւն. կօնցերտ. և այլն:» Եւ անհ. Միթէ կարելի է թողուլ դաւանութիւնը և կրօնը և եկեղեցական պաշտամունքը և նոցա տեղ վերա-

ծել, գեղարուեստ. կօնցերտ. և այլն: Եւ միևնոյն ժամանակ անուանել քրիստոնէական եկեղեցի կամ կրօնական համայնք:

Այդ է, ահա, պատկերացումն ձեր նպատակի, ձեր համայնքի համար, իբրեւ քրիստոնէականի: Սակայն որի մէջ չ'կան, ոչ հաւատ, և ոչ հոգևոր խորհուրդ: Եւ ոչ Աստուածածանութիւն. և ոչ Աստուածաշնորհութիւն. և ոչ Աստուածային օրէնք, որոնք Յիսուսի քարոզութեան սկզբունքներն են. և որոնք ձեր քարոզածի և կազմածի մէջ չ'կան:

Ուստի ձեր խորհուրդը հակառակում է Յիսուսի քարոզած բոլոր սկզբունքներին. թէպէտ, դուք ասում էք «Ընդունել Աւետարանական սկզբունքների վեհութիւնը ինչպէս Յիսուսն է քարոզել:»

Եւ այդպիսի կրօնականութիւն, որ ներկայացնում էք, ոչ հոգևոր փրկութեան համար է պէտք. և ոչ աշխարհային կեանքի. որովհետեւ, առանց Աստուածաշնորհութեան, աշխարհը տարտարոս է մարդկան համար:

Կրօնը հոգևոր է, և նորա նպատակն է Աստուածաշնորհութիւն. իսկ ձեր ներկայացրածը մարմնավոր է, և նորա նպատակն է աշխարհային զբօսանք: Եւ դա կրօնական չէ:

55. ԽԵ. Ասում էք, «Յետագայում պակասում է և նուազում քրիստոնէական ոգին. այնքան աւելանում են ձեր, աղօթքի ժամերի թիւը, և անթիւ կրկնութիւնները:» Եւ թէ՛ «Քրիստո-

նեաները մոռանում են իւրեանց վարդապետի գլխաւոր պատուէրներից մէկը. «Աղօթք անելու ժամանակ հեթանոսների նման շատախօս մի լինիք, որոնք կարծում են թէ, շատ խօսելու պատճառով կ'լսուին: Նախքան ձեր խնդրելը, ձեր հայրը գիտէ, թէ ձեզ ինչ է պէտք:»

Աղօթքի ժամակարգութիւնը չէ ներկայացնում քրիստոնէական ոգւոյ պակասութիւն: Այդ ուղղադատութիւն չէ: Այլ ընդհակառակն նա վկայում է քրիստոնէական հոգւոյ և սրտի եռանդնանուէր կատարելութիւնը Աստուածաշնորհութեան համար:

Ո՞չ ապաքէն և ինքն Քրիստոս տալիս է իւր եկեղեցւոյն օրինակ աղօթքի. «Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ել 'ի լեառն կալ յաղօթս. և հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ:» Ղկ. 2. 13:

Իսկ այն թէ, «Աղօթքի ժամանակ հեթանոսների նման շատախօս մի լինիք» չէ նշանակում չ'անել շատ աղօթք. այլ նշանակում է, աղօթքի ժամանակ չ'խնդրել յաճախ մարմնական պիտոյքի համար: Եւ դորա բացատրութիւնը տալիս է ինքն Քրիստոս. «Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր, թէ, պիտոյ է ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ, և զարդարութիւն նորա. և այդ ամեն յաւելցի ձեզ:» Մտ. 2. 32:

Եւ ինքն Քրիստոս էր, որ պատուիրում էր, միշտ աղօթել և չ'ձանձրանալ. «Ասաց և առակ

մի նոցա առ այն թէ, պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս, և մի ձանձրանալ:»

Եւ յայտ ուրեմն է թէ, աղօթքին հակառակաւ լսուելը, յայտնում է հակառակութիւն Աստուածապաշտութեան դէմ: Եւ այդ ինչո՞ւ պէտք է ունենաք. ոչ ապաքէն այդ հետեանք է աշխարհային մոլորութեան:

59. Ի՞նչ. Ասում էք, «Բացարձակ կուրութիւն կ'լինի մեր կողմից ուրանալ կամ չ'գիտակցել, թէ, ի՞նչ սոսկալի դրութեան մէջ ենք դնում մեզ և ուրիշներին, երբ ամեն օր գնում ենք եկեղեցի, Պոնարհեցո՞ւ և Ապրեցո՞ւ ասում, և ուրիշներին էլ ստիպում, որ ամեն օր գան մեզ լսեն:»

Սակայն, այդ սոսկալի է այն սրտերի համար, որոնք պաղած են և մեռած են հաւատոյ համար: Իսկ հաւատացեալների համար, ո՞չ միայն սոսկալի չ'են, այլև, մխիթարական են և ցանկալի հանապազօր, ըստ բանականութեան: Ուրեմն չ'պէտք է ձեզ բացարձակ իրաւունք համարէք իշխել ուրիշի հոգեկան զգացմունքի և սրտի վրայ, և ջանալ արգելուլ աղօթելու պաշտօնը, ընդդէմ բարեպաշտութեան հոգւոյն:

«Պոնարհեցոի» և «Ապրեցոի» շնորհիւն է, որ գտնում է բովանդակ աշխարհ ողորմութիւն Աստծուց, իբրև մարդ արարած:

Եւ այդ հասկանալի է միայն նրանց, որոնց մէջ կենդանի է հոգին Աստուածապաշտութեան:

59-60. Ի՞նչ. Եւ որպէսզի կարողանաք աղօթքը

խափանել, ասում էք. «Իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մենք առանց կեղծիքի և ստութեան . . կ'խոստովանինք ազնուութեամբ, որ այդ ձևով և եղանակով շարունակել մենք հոգեւորականներս այլ ևս չենք կարող:»

Այդ այն է, որ ձեզանից պակասած լինելով հոգին հաւատարմութեան կրօնական, կամենում էք, որ միւսներն ևս ձեզ նմանին, արհամարհեն, ձեր արհամարհածը, աղօթքը և պաշտամունքը. և հաւանին ձեր հաւանածին, ապրիլ ազատ և անվախ. չ'մտածելով, որ Քրիստոս նախատեսելով այդպիսի մոլորութիւնները, ասած է. «Վա՛յ աշխարհի՛ ի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեան. բայց, վա՛յ մարդոյն այնմիկ, գայթակղութեան. բայց, վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն:» Մտ. ԺԶ. 7. Իսկ ձեր թիւր խորհրդատուութիւնը, ո՞չ միայն գայթակղութիւն է, այլև ապստամբութիւն, որով կամենում էք պատերազմել ընդդէմ յաւիտենական ճշմարտութեան, ընդդէմ Աստուածապաշտութեան, ինչպէս որ ասացինք: Եւ այդ է ըստ ցուցման սուրբ Աւետարանի պտուղ այն որոտման, որ սերմանում է շարն սատանայ մարդկային մտաց անդաստանում, սրտում, «Եւ որ վարեացն զայն, սատանայ է, . .» Սակայն ասած է նաև, «Որպէս ժողովի որոմն, և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս: Ելցեն չրեշտակը և մեկնեսցեն զշարս ի միջոյ արգարոց. և արկցեն զնոսա ի հնոց հրոյն: Անդ եղիցի լալ և կրճաւ ատամանց:»

Անտարակոյս է, որ ձեր համոզմունքն 'և մտաւորական ըմբռնումն ձեզ կ'ասեն, որ դոքա առասպելներն են. բայց պարտիք իմանալ և այն, որ այդ ևս 'ի չարէն է:

60. Եւ. Սուրբ պատարագի խորհրդի մասին խօսելով, համարում էք, որ նա միմիայն տիրոջ ընթրեաց յիշատակի համար է: Սակայն, այդ համարումն համաձայն չէ պատարագի իսկական խորհրդին: Նա հաստատուած է, նոյն իսկ Քրիստոսի խօսեցած խօսքերի վերայ: Նա ասած է «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարեւն իմ, յիս բնակեցցէ. և ես 'ի նմա:» Յով. 2. 57:

Եւ թէ. «Առէք կերէք այս է մարմին իմ: Արբէք 'ի դմանէ. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց:» Մտ. 2. 25:

Եւ երբ Քրիստոս այդ իմաստով խօսեցաւ, աշակերտները խիստ համարեցին այդ խօսեցածները, ուրեմն և անընդունելի. սակայն Քրիստոս բացատրեց իւր ասածների խորհուրդը, և ասաց. «Հոգին է կենդանարար. մարմինն ինչ ոչ օգնէ. զբանն զոր խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք: Յով. 2. 57, 64: Որով յայտնում է, որ օրհնեալ հացը և գինին ճաշակելով միանում են նորա հետ, նորա քարոզած խորհուրդներովը, որը ընդունում են նրանից: Եւ այդ մտօք ևս ասած է. «Ես եմ հաց կենաց, որ գայ առ իս ոչ քաղցիցէ. և որ հաւատայ յիս, ոչ երբէք ծարաւեցի: Յով. 2. 35:

Ուրեմն, սուրբ պատարագը, ունի այդ ներքին հոգևոր խորհուրդը, բաց'ի ընթրեաց յիշատակից, որ դուք անտեսած էք:

62. Եւ. Քրիստոսի աշխարհ գալը և չարչարուելը և փառաւորիլը, մի տնօրինական խորհուրդ էր, որ կատարուեց. և այդ ուսուցանում է նորա Աւետարանը. «Ո'վ անմիտք և հեղգասիրտք, առ 'ի հաւատալ ամենայնի, զոր խօսեցան Մարգարէքն: Ո'չ զնոյնս պարտ էր Քրիստոսի չարչարիլ, և մտանել 'ի փառս իւր:» Դկ. ԻԴ. 25:

Իսկ դուք խորշելով այդ տնօրինական խորհրդից. և որ նորա չարչարանքը եկեղեցին միջնորդ է համարում մեղաց թողութեան համար. և որ Աստուծոյն ընդունելի է՝ համարում էք Աստուծոյն սարսափելի Աստուած, որ նա այդպէս է կամեցել:

Եւ այդ նրանից է, ինչպէս որ ասաց Քրիստոս. «Մոլորեալք ոչ գիտէք զգիրս և ոչ զգորութիւն Աստուծոյ:» Մտ. ԻԲ. 25:

66. 65. 1. Աստուածպաշտութիւնը և աղօթքը պահանջած և կարգադրուած պարտաւորութիւն է մարդոյ համար, Աստուածակոյս կողմանէ. և այդ կատարում է եկեղեցին Աստուծոյ:

Իսկ դուք ասում էք. «Ուրեմն աղօթելու համար էլ ամենևին կարևոր չէ ամենօրեայ եկեղեցական պաշտամունքը. «բաւական համարելով շաբթական մի օր պաշտամունք կատարել»:

րելն» նոյնպէս, արգելում էք և զանգահարութիւնը, և ձևականութիւնները. որով և եկեղեցի գնալը, և հանապազօրեայ աղօթքի պարտականութիւնը. և այդ մասին պատրուակելով այն միտքն, որ իբր թէ, «Աղօթող սիրտը Աստծուն մօտիկ է, եթէ նա տարին մի անգամ էլ եկեղեցի չ'մտնի. իսկ աղօթելու անտրամադիր հոգին, եթէ լոկ սովորութեան համար, ամբողջօրն էլ եկեղեցում անցկացնէ, միևնոյն է, հեռու է մնում Աստծուց, և ոչինչ չի շահում»:

Աղօթասէր սիրտ ունեցողը ինքնակամ յօժարութեամբ, կ'յաճախէ եկեղեցի ժամապաշտութեան ժամանակ, և չի ձանձրանայ նրանից: Եւ մեր իրաւունքից դուրս է փակել նորա առաջին եկեղեցւոյ դուռը և արգելել նորա բարեպաշտութիւնը: Իսկ անտարբեր սիրտ ունեցողն ևս երթալով եկեղեցի, կ'զգաստանայ կ'ընտելանայ լինիլ աղօթանուէր: Ուրեմն նորա առաջին ևս արգելք դնելու իրաւունք չ'ունինք: Եկեղեցի գնացողները կամ չ'գնացողները, ունին իրանց համար կամաւորութիւն, սակայն խափանարար լինելը ունի նշանակութիւն բռնանալու բարի կամքի վերայ:

Ոչ ոք բանական չէ կարող տարակուսիլ, որ եթէ եկեղեցւոյ հանապազօրդական պաշտամունքը խափանուի, կ'հեռանան մարդկան սրբուները և աղօթքից և Աստծուց, և մեռնեն բարեպաշտութեան համար, և կ'լինին շտեմարան դառնութեան և չարութեան:

Ուրեմն, խօսում էք հակառակ արդարու-

թեան, 'ի կամս չարին:

Մի՞թէ, թեթե ինչ էք համարում թշնամանել մարդկային բարեպաշտութիւնը, որի մասին պատասխան պիտի պահանջուի:

66. Ա. Ասում էք. «Եւ միանգամայն կ'որոշուի նաև այն դիրքը, որ նա (եկեղեցին) իւր ամբողջ հոգևորականութեան հետ միասին պարտաւոր է բռնել դէպի այն դարեդար անցնող հեթանոսական սովորութիւններն»:

Հեթանոսական սովորութիւն էք համարում, պատկերներին, Աւետարաններին, ուխտատեղերին և սուրբերին դիմելը, զոր համարում էք սնապաշտութիւն և կռապաշտութիւն: Սակայն, այդպիսի սովորութիւնը չէ հեռացնում մարդկան սրտերը Աստուածապաշտութիւնից. այլ դիմողները յարգում են և դիմում են նոցա սրբութիւններին, համարելով այդ սրբութիւններն պարգև Աստուծոյ: Եւ այդ վերաբերում է, եկեղեցւոյ, բարեխօսութիւն ընդունելու վարդապետութեանը, և ոչ թէ պաշտելու: Եւ, այնու ամենայնիւ, լաւ է մարդիկներին հետեւել դրան. քան թէ լինիլ ուրացող և անհաւատ: Այդ սովորութեան մէջ մարդ կարող է նկատել Հաւատաւոր Աստուած. իսկ, ուրացողութեան և անհաւատութեան մէջ լոկ մոլորութիւն և անգիտութիւն:

Ասում է Ս. Աւետարանը. «Զիմրդ ասես ցեղբայր քո, թող հանից զշիւղդ յականէ քումմէ. և անաւարդիկ 'ի քում ականդ գերան կայ: Կեղծաւոր, հանախ զգերանդ յականէ քումմէ,

և ապա հայեցես հանել զշիւղն յականէ եղբօր քո: Մտ. է. 4:

67. ԼՔ. Ասում էք. «Մեր եկեղեցին թոյլ է տալիս, որ աւելի նիւթական առարկաները պաշտուին. . . քան թէ կենդանի Աստուածը:»

Եթէ, ուղիղ սրտով էք յիշում կենդանի Աստուծոյ ամենասուրբ և ահաւոր Անունը, որ նա ինքն է կենդանի Աստուած, ապա ի՞նչ կ'նշանակէ, որ դուք կենդանի Աստուծոյ փոխարէն մէջ բերիք մի աննկարագրելի բարձրագոյն դոգմութիւն, որին տեսանելի արտայայտութիւն էք համարում տիեզերքը, որի մասին և խօսեցինք:

Ո՞րքան ուրախութիւն կ'լինէր, եթէ դուք համար սիրտ և հանճար ունենայիք, ճանաչել կենդանի Աստուածն յաւիտենից, բայց, աւաղ, այդ հեշտ չէ ձեր համար, որովհետեւ, անձնատուր էք կաշկանդիչ ազդեցութիւնների, թէ 'ի մարդկանէ, և թէ 'ի չարէն սատանայէ, որպէս որ յայտ է ձեր համոզումներէն և ըմբռնումներէն:

67. ԼՔ. Եկեղեցական ծիսարանը, Մաշտոցը խոտելու համար ասում էք. «Բայց սրբանայից պիտի հեթանոսական սովորութիւնների մնացորդներ կան մեր Մաշտոցների մէջ, (այսինքն Մաշտոցի) . . : Ապացոյցի համար բաւականանան նրանցից մի քանիք թուելով:

1. Կանոն գիշերային ժամու աղօթից, որ կատարի 'ի վերայ ծանր հիւանդաց, 'ի բժշկութիւն ցաւոց, և 'ի բաւութիւն յանցանաց:» Աս-

կայն այդ կանոնի մէջ չ'կայ, ո՛չ մի հեթանոսական մնացորդ, այլ այդ քրիստոնէական բարեպաշտութեան և հաւատոյ պատուէր է և սովորութիւն. և առնուած է Առաքելական պատուէրներէն, որ և ասում է. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցոյն. և արասցեն 'ի վերայ նորա աղօթս. օծցեն իւղով յանուն Տեառն: Եւ աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն. և յարուսցէ զնա Տէր: Եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ թողցի նմա:» Յակ. Ե. 14.

Եւ եթէ ունենայիք հաւատ Քրիստոսի առաքելոց վերայ, չէիք համարի այդ պատուէրը մնացորդ հեթանոսական. որովհետեւ, հեթանոս անուամբ հասկացում է ազգաց անհաւատութիւնը. և Աստուծոյն ծանօթ չ'լինելը, իսկ այդ պատուէրը յանուն Տեառն է.

2) «Խաչալուայ առնելոյ: 3) Կանոն դժուարածին յղի կնոջ:» Եւ այլն. և որոց ևս չէ կարելի հեթանոսութիւն անուանել, ըստ քրիստոնէական հաւատոյ, մինչդեռ աղօթքով են:

Խաչի յարգանքը, վերաբերում է խաչեցելոյն, որի անունով ձեզ համակուած էք ցոյց տալիս:

Յղի կնոջ վերայ աղօթելն ներշնչում է հաւատ և ուժգնութիւն սրտի, ծննդականին: Նոյնպէս հոգեւոր են և միւսներն:

Ուրեմն ձեր արհամարհանքն Մաշտոցի մասին ևս հետեանք է ընդհանուր արհամարհանքի, 'ի տարապարտոց, և ո՛չ ուղիւթեան:

Նա կազմուած է բարեպաշտական ծէսերով և խորհուրդներով, և ինչո՞ւ պիտի լինի խոտելի, եկեղեցի և հոգևորականութիւն ճանաչողների համար:

68. ԼԳ. Ասում էք. «Մենք այլ ևս չենք կարող թոյլ տալ և չ'պիտի թոյլ տանք որ հայ հոգևորականները, կարկուտ կապելով և անձրև բերելով զբաղուին:»

Դուք կամենում էք վարկաբեկել ընդհանուր հոգևորականներին: Այդպիսի զբաղմունքներ չ'կան մեր հոգևորականաց մէջ: Իսկ եթէ հատուկապէս անհատներ գտնուած են, կամ կան, այնպիսիները, առանց ձեզ ևս մշտապէս արհամարհուած են, թէ հոգևորականներից և թէ ժողովրդից:

Ուրեմն սնապարծութիւն է ձեր ցուցումն, և աւելորդ ձեր պահանջն:

68. ԼԵ. Եկեղեցւոյ սրբազան խորհուրդների մասին խօսելով, բովանդակապէս ենթարկում էք արհամարհանաց, ձեր ընտրած ոճոյն և տրամադրութեանը համեմատ. բայց խօսելով նոցա արտաքին եղանակաց և որպիսութեանց մասին, քանթէ նոցա ներքին խորհուրդները և սրբութիւնների մասին. ուստի և այդ մասին խօսիլ աւելորդ եմ համարում:

Միայն թէ, Ապաշխարութեան համար առաջիք, թէ «Նա կորցրել է իւր նշանակութիւնը:» Եթէ Ապաշխարութիւնը կորցրել է իւր նշան-

ակութիւնը. այդ եկեղեցւոյ ժողովրդի համար չէ. այլ հետեալները և ախտաժէտների համար է, որոնց համար արհամարհելի է և Աւետարանը:

Եկեղեցւոց ընդունուած է ապաշխարութեան խորհուրդը այնպիսի հիմունքներով, որ յաւիտեան անդրդուելի է, մարգարէից և առաքելոց գրածներով, Աստուծոյ հրամանով, մեղաց թողութեան համար: Նա հոգևոր խորհուրդ է, յարակից զղջալոյ՝ ի չարեաց, և միջնորդ առ Աստուած: Իսկ ուր չ'կայ զղջումն, չ'կայ և մեղաց թողութիւն: Եւ միթէ՞ կ'պակասին աշխարհիցս մեղքն և զղջումն. նոյնպէս պակասելու չէ և Ապաշխարութիւնն: Զղջումն մտածողական է. իսկ Ապաշխարութիւնն գործնական, որպէս են հաւատն և գործն: Նրան չ'ճանաչել, կ'նշանակէ յամառիլ մեղաց մէջ, սրտի զղջման հակառակ: «Եւ ելեալ քարոզէին, զի ապաշխարեսցեն:» Մրկ. Զ. 12:

«Այլ եթէ ոչ ապաշխարիցէք, նոյնպէս կորնչիցիք:» Ղկ. ԺԳ. 3:

Եւ ինչպէս որ Աւետարանը նոյն է և անփոփոխ, ինչ որ իւր սկզբից, նոյնպէս և մարդը նոյն է և անփոփոխ, ինչ որ աշխարհի սկզբից, որի համար ևս Աւետարանը ուղարկուած է Աստուծոց, և որը, պարտականութիւն է մարդոյ համար լսել և կատարել:

7. ԼԶ. Ասում էք որ եթէ ձեր նկատած թերութիւնները և պակասութիւնները և ժամանակի պահանջը բմբռնելու անընդունակ լինին

հոգևոր առաջնորդները, այս ինքն է, եթէ ձեր ասածները չ'ընդունին, «Այն ժամանակ կ'մնայ դիմել կենդանի եկեղեցուն ժողովրդին, որ վեր կենայ և մաքրէ Սիօնը ապականիչներից և աւազակներից:

Ողջամիտ դատողութեան հակառակ է դիմել ժողովրդին և գրգռել կրօնական խնդիրներ լուծելու համար: Այդ նշանակում է սերմանել նոցա սրտերի մէջ չարիք ապստամբութեան, այն ևս, այն բանի համար, որ նորա դատողութիւնից 'ի վեր է. և որի հետևանքը կ'լինի ներքին ատելութիւն և թշնամանք, և պատճառ երկպառակութեան և կործանման: Եւ այդպիսի յորդոր կարգալը ցոյց է տալիս ձեր երիտասարդական սխալմունքը, և համոզմունքի անկանոնաւորութիւնը:

Իսկ հոգևորականներին համարել ապականիչներ և աւազակներ, որոնք ձեզ կամակից չեն այդ խնդրում, այդ ևս վայրասլար հայհոյաբանութիւն է, և անվայել, իւր կըթութեան և հասկացողութեան վերայ վստահ մարդոյ համար. և այն այնպիսի հանգամանքով, որը որ չի պատկանում իւր իրաւունքին. որովհետեւ, դուք եզակի անձնաւորութիւն էք, բայց ընդհանուրի պահանջէք ներկայացնում եկեղեցւոյ մասին:

45. Իսկ Սիօնի անունով ևս ինքդ ձեզ զրկած էք խօսելու իրաւունքից, անուանելով նորա կրօնը 'ի շարս միւսների, մեռած կրօն: Մեռած կրօնի հաստատութիւնը պէտք է արժէք չունենայ ձեզ մօտ, և ոչ նորա պահապանները:

Ուրեմն չունիք Սիօն, որ նորա պահապանների մասին ևս հոգայիք:

2. ԳԼ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ. ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.

72. ԼԷ. Խօսելով կուսակրօնութեան մասին ասում էք «Եկեղեցական պատմութիւնը մեզ ուսուցանում է. . Աշխարհից ձանձրացած, նրա չարիքներից փախչող հին աշխարհի մարդիկ, մի կողմից փրկիսփայլութեան միւս կողմից հեռաւոր արևելքի կրօնների ազդեցութեամբ խոյս են տուել դէպ'ի անապատները, այն տեղ միաբանութեան մէջ դտնելու իրենց հոգին և իրենց Աստծուն: Այն տեղ սրբավայել կեանքով փառաւորելու Աստծու Անունը:»

Եւ հետևեցնում էք, «Ինչ որ ներկայ հակացողութիւններին անհամապատասխան է, և կրօնի համար էլ անտարբեր է, ուրեմն ոչ մի նշանակութիւն չունի, պէտք է վերացնել:»

Ձեր յիշած եկեղեցական պատմութիւնը ինձ անծանօթ է որը որ ձեզ ուսուցել է այդպէս: Սակայն պարտաւոր ենք իմանալ ս. Աւետարանով որ կուսակրօնութիւնն ևս, քրիստոնէութեան հետ սկզբնաւորութեամբ է առաքելներով և առաքելոց օրինակով. և ոչ թէ արևելեան կրօնների ազդեցութեամբ: Եւ այդ ո՞րպիսի եկեղեցական պատմութիւն է որ հակառակում է Աւետարանին:

«Եւ ամեն այն որ եթող դտուն. . զկին և զորդիս, հարիւրապատիկ առցէ և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ:» Մտ. ԺԹ. 29:

«Եթէ ոք դայ առ իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր, և զկին և զորդիս. . և զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ» Մկ. ԺԴ. 26: Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. ահաւասիկ, մեք թողաք զամենայն և եկաք զկնիքո. արդ զի՞նչ լինիցի մեզ . . » Մտ. ԺԹ. 27: Առաքեալները, ահա, թողին ամեն ինչ և գնացին Յիսուսի յետևիցը, որ կարողանան ծառայել նորան, և քարոզել աշխարհին երկնից արքայութեան խորհուրդը: Եւ այդպէս ևս շարունակուում է անկնութիւնը քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, մինչև ցարդ, նրանց հետևողները մէջ: Իսկ դուք պատմում էք այլ ընդ այլոյ:

Եւ ի՞նչ իրաւունք ունինք արգելք դնել ցանկացողների առաջին: Քրիստոս ասաց. «Որ կարողն է տանել, տարցի:» Մտ. ԺԹ. 10:

75. ԼՔ. Եթէ կուսակրօնութիւնը հաստատուն մնայ, ասում էք, «Բայց դրանով էլ կ'տուժէ կրօնը, և քրիստոնէական գործը. . : Եռանդուն գործունեայ և կրթուած մարդիկ եկեղեցական բարձրագոյն պաշտօնէութեան մէջ չեն մտնի, այն ինչ միայն այդպիսիները կարող են իրագործել եկեղեցու քաղաքակրթական և լուսաւորչական նպատակները, և նրա ազդեցութիւնը կրկին զօրացնել ժողովրդի մէջ:»

Ձեր յիշած կրօն, քրիստոնէական գործ, եկեղեցու քաղաքակրթական և լուսաւորչական նպատակ, ասացեալները, ոչ մէկը մասնակցութիւն չունին Հայոց եկեղեցւոյ հետ, այլ պատ-

կանում են ձեզ կազմելիք նոր համայնքին, որ յայտնի է ձեր ասելով, և որին կարող են ծառայել ձեր ցանկացած և ձեր սրտով կրթուածները, և որոնք չեն կարող ծառայել և կամ լինել պիտանացու եկեղեցւոյն Հայոց, հակառակ լինելով նորա դաւանանքին, ինչպէս յայտնած էք: Բայց արտաքին կերպով ցոյց էք տալիս, որպէս թէ խօսում էք Հայոց եկեղեցւոյ համար, այն ոճով, որ գործ էք ածում ձեր գրածում անպատկանաբար: Եւ կարծում էք թէ, արդէն եկեղեցին ձեր տիրապետութեան ներքոյ է: Եւ նա հեռի է ձեր խորհուրդներից և ձեր հարուածներից:

Ասում էք նպատակ քաղաքակրթական և լուսաւորչական:

Աշխարհի կրթութեան և լուսաւորութեան համար տուած է Աստուած սուրբ Աւետարանը. իսկ ձեր նպատակները հակառակ լինելով նորա վարդապետութեանը և դաւանութեանը, չեն կարող համարուիլ քաղաքակրթական կամ լուսաւորչական: Ամենայն խորհուրդ և գործ, որ ընդդէմ են Աւետարանին, խաւարային են և խանգարիչ, առանց այլևայլութեան. որովհետեւ նա Աստուածային յայտնութիւն է:

70. ԼԹ. Ձեռք էք մեկնում և դէպ'ի եկեղեցական վարչական հաստատութիւնը, և ասում էք. «Մեր այժմեան եկեղեցական կազմակերպութիւնը բացարձակ միապետական է. . և թէ՛ «Այդպիսի կրաւորականութիւն արդի ժամանա-

կազմից մարդը ընդունել կարող չէ, մեր ներգործական դարում:» Եւ թէ, մենք իրաւունք եւ պարտք ունինք պահանջելու, որ ժողովրդապետական սկզբունքը, լաւագոյն մտքով իշխող լինի ժողովրդական եկեղեցու մէջ:» Եւ իբր թէ, սկզբում իւրաքանչիւր համայնք կառավարուել է անկախօրէն իւր էրէցներով, աւագ անդամներով:

Հայ ազգը ընդհանրապէս ճանաչում է իւր եկեղեցւոյ Հայրապետութիւնը նուիրական և անձեռնմխելի. և հպատակ է նրան պատկառանքով և յարգանքով. և նրանով ևս իւր եկեղեցական իշխանութիւններին:

Ուստի, Ձեր ընդդիմախօսութիւնը Հայրապետութեան դէմ ևս, կ'համարուի դատապարտելի խորհուրդ և դատապարտելի վստահութիւն:

Եկեղեցւոյ Պետականութիւնը սկզբնաւորուած է եկեղեցւոյ հաստատութեան հետ, և կ'մնայ յաւիտեան անբաժան նրանից:

Աստուած ինքն հաստատեց քահանայութիւնը և քահանայապետութիւնը: «Եթէ լսելով լուիցէք ձայնի իմում, և պահիցէք զուխտն իմ. և զուք եղիջիք ինձ 'ի թագաւորութիւն, և 'ի քահանայութիւն, և յազգ սուրբ:» Ել. ԺԹ. 5:

77. Խ. Եւ ամփոփում էք ձեր ամբողջ ասածները այս եզրակացութեան մէջ. «Պէտք է վերանայն հոգեւորականների կամայականութիւնը: Կախարդական և կռապաշտական կրօնը: Դաւանանքների իշխանութիւնը: Փարիսեցիական ձեւ-

կանութիւնները: Եւ Հայոց եկեղեցին պիտի հիմքից 'ի վեր վերանորոգուի և վերածնուի Յիսուսի Աւետարանի հիման վրայ, առանց յապաղելու և առանց տատանուելու: Ահա մեր պահանջը և զգացած ծանր կարիքը, . . . Այդպիսի պահանջ անել ստիպում է մեզ մեր բուն սէրը դէպ'ի եկեղեցին և կրօնը:

Դոցա ամենի մասին խօսուած է ըստ տեղւոյն. իսկ նոցա համառօտակին այս է:

Հոգեւորականները ոչինչ կամայականութիւն չունին եկեղեցւոյ մէջ. նոքա միմիայն սպասաւորողներ և պաշտօնեաներ են:

Եկեղեցւոյ կրօնը կախարդական և կռապաշտական չէ: Ինչ որ ունի եկեղեցին, բովանդակապէս հիմնուած են Աւետարանով և Քրիստոսով, եթէ նոքա ձեզ ընդունելի են:

Դաւանանքների իշխանութիւն եղծանողը չունի իրաւունք առարկել եկեղեցւոյ և կրօնի անունով. որովհետեւ առանց դաւանանքի, եկեղեցի և կրօն չ'կայ:

Փարիսեցիութիւն յանդիմանողը ինքն եկեղեցին է Աւետարանով: Նորա մէջ փարիսեցիութիւն չ'կայ. թէպէտ ձեր աչքին այդպէս է:

Ասում էք Աւետարանի հիման վրայ վերանորոգուի Հայոց եկեղեցին: Աւետարանի հիմքը երկնից արքայութեան խորհուրդն է, և ճշմարիտ Աստուածաշտութիւնը: Իսկ եկեղեցին հեռացած չէ այդ ճշմարտութիւններից: Ուրեմն ոչ մի հարկ չ'կայ կրկին հաստատել նորան 'ի նորոյ, Աւետարանի հիման վերայ: Այդ մասին

ինքներդ ձեզ պիտի հրաւիրէք քանթէ եկեղեցուն:

ԽԱ. Եւ պահանջում էք որ անյապաղ կատարուին ձեր ասածները: Սակայն ձեր պահանջածից և նպատակներից առաւել կարեւոր և իրաւացի պահանջ կայ ձեր առաջին: Յանկալի և յոյժ ցանկալի է, որ սիրտ և հնազանդութիւն ունենաք, թողուլ ձեր խարխափող և պաշարեալ համոզումները, և սնոտի նպատակները. և խոնարհիլ արդարութեան և ուղղութեան առաջին, որ է Հոգին՝ սուրբ Աւետարանի, նորա քարոզած ճշմարտութիւնները: Եւ ձեր սիրտը կ'վկայէ թէ ի՞նչ էք լսում:

Այս է բարին և հաճոյականն Աստուծոյ. և ուրախութիւնն Հրեշտակաց սրբոց: Եւ դուք ձեր յառաջաբանում յայտնած էք կամք լսելու ձեր սխալմունքի մասին:

Ձեր պահանջածներից ոչ ինչ օգուտ չունիք, ոչ ձեր անձի համար, ոչ ձեր ազգի համար. և ոչ մարդկութեան համար. բայց ձեզ ցանկացածովն գտած կ'լինիք ձեր անձն: Եւ այդ ցանկութիւնը, մարդասիրական և եղբայրսիրական, և օրէնքի հրամայած ցանկութիւն է:

ԽԲ. Ասում էք «Այդպիսի պահանջ անել ստիպում է մեզ մեր բուն սէրը դէպ ՚ի եկեղեցին և դրօնը. . .»

Բայց ի՞նչ նշանակութիւն ունի շրթանց խոստովանութիւնը, ընդդէմ խոստովանութեան

սրտի: Ձեր յայտնած նպատակներով, և համոզումներով և խօսքերով, իբրև թշնամի, և ատող և դժբող, չէք կամենում թողուլ եկեղեցւոյ քաւրը քարի վրայ: Մինչև անգամ այդ մասին հրաւիրում էք ձեզ օթանդակեն հոգեւորական և ժողովուրդ. իսկ այստեղ բուն սէր էք յայտնում: Եւ ի՞նչ հաւատ կայ դորա մէջ: Եւ ձեր կազմելիք համայնքն ևս գոյութիւն չունի, որ նորա համար յայտնած լինէիք ձեր սէրը: Եւ նա չէր կարող ունենալ կոչումն եկեղեցւոյ և կրօնի, ըստորում հակառակորդ:

ԽԳ. Եւ հնա թէ ի՞նչ է ներկայացնում ձեր կամեցած դերանկեղեցին, նոյն իսկ ձեր ասութիւններովն. եկեղեցւոյ տեղ՝ ժողովարան: Դաւանանքի տեղ՝ Գեղարուեստ: Պաշտամունքի տեղ՝ Կօնցէրտ: Սուրբ գրքի տեղ՝ առասպել բաբելոնական: Քահանայութեան տեղ՝ և ոչ ինչ: Հոգեւոր իշխանութեան տեղ՝ և ոչ ինչ: Երկնից Արքայութեան տեղ՝ և ոչ ինչ: Ժողովրդեան տեղ՝ դերաքահանաներ:

Եւ դրանով դուք ձեզ համարում էք մղեալ ՚ի բուն սիրոյ եկեղեցու և կրօնի:

Յայտ իմն է, ըստ ներկայ ասացուածոց, որ անձանուէր էք անգիտակից նանրութեանց, ենթակայ խօսից:

Կամենում էք ազատ մարդու համար, ազատ համայնք սահմանել, հետեւելով որդւոցն չարութեան և ապստամբութեան: Սակայն ասած է. «Իսկ եթէ լոյսդ, որ ՚ի քեզ է՝ խաւար է, խա-

ւարն հրչափ ևս:» Մտ. 2. 23:

Մինչդեռ մարդիկ օրէնքի և երկիրի տակ են, դարձեալ, իւրեանց ամէն տեսակներով, ծառայում են մեղաց և չարեաց: Իսկ եթէ, նրանց կ'յանձնէք 'ի ձեռն ազատութեան, ինչ կ'լինի այն ժամանակ նոցա կեանքը և վիճակը. «Եւ ինի յետինն մարդոյն այնորիկ չար, քան զառաջինն» Մտ. ԺԲ. 45:

Թէպէտ, դուք համարում էք, որ այդ ճանապարհը լուսաւորութեան ճանապարհ է. բայց ըստ գործոյն, խաւարային և կորստական է, ըստ յանդիմանութեան հաւատոյն, և դաւանութեանն և խոստովանութեանն ընդհանուր ազանց աշխարհի. և ըստ Աստուածային յայտնութեանց, որպէս և ասած է.

«Քանզի ընդարձակ է դուռնն, և համարձակ ճանապարհն, որ տանի 'ի կորուստ... Քանզի, անձուկ է դուռնն, և նեղ ճանապարհն, որ տանի 'ի կեանս:» Մտ. 13:

ՎԵՐՋԱԲԱՆ

Արդէն յայտնի է ընթերցողներին, որ Հայր Երուանդ վարդապետը ձգտում է հաստատել քրիստոնէական եկեղեցւոյ փոխարէն, այնպիսի կրօն, որ հեռի լինի իսլաւո, հոգևոր խորհուրդներէց. և եզերուի միմիայն մարմնականով:

Սակայն ամենայն գործ, որ ճշմարտութեան հակառակ է, ապախտ է աշխարհի համար: Չէ կարող ունենալ գոյութիւն նոյնպիսի կրօն: Առանց հոգևորի կրօն կարելի չէ: Իսկ մարդիկ չեն կարող ապրիլ առանց կրօնի. որովհետեւ նա բանականութեան պարտք է: Ուստի, կրօնը կ'մնայ նոյն հոգևոր խորհրդի մէջ, աշխարհի համար, ինչպէս որ կայ, և ինչպէս որ ճշմարիտ է: Կրօնի տէրն և տուողն Աստուած է:

Եւ կ'հետեւի ասել, որ Հայր Երուանդը, որ այժմ պարոն Երուանդ՝ ծառայում է մոլորութեան և ընդհայնութեան, որպէս նա լսած է, իւր ներկայ պատասխաններով:

Սակայն, այն է առաւել ուշադրաւ և ցաւալի, որ այդպիսի գաղափարի ընծայուած են մեր ժամանակի գործողները, հայ երիտասարդները, մեծաւ մասամբ: Իսկ առաւել ցաւալին և աններելին, և առաւել աղէտաբերը այն է, որ նոյնպիսի անձինք, մոլորական համախոհութեամբ

ձգտում են մոլորցնել մեր ուսումնարաններով ընդհանրապէս, ազգի անմեղ սերնդի ուսանողներին, ապագայ սերունդը իրանց նմանացնելու համար, խաւարային խորհրդով, որի համար և խօսեցինք, սոյն պատասխանների մէջ: Եւ այդ, առաւել չարաչար և առաւել մահառիթ հարուած է ազգի համար, քան Երուսաղէմի վարդապետի ձգտումն և նպատակն եկեղեցւոյ դէմ: Որովհետեւ, նորա աշխատութիւնը չէզոք է. իսկ այդ պղտոր հրապոյրը գործնական է, և բարոյական մահ, հեռացնելով մարդոյն Հաւատից և Աստուածապաշտութիւնից, ՚ի կամս չարին: Արդէն ցոյցը և անցք աշխարհի է, որ ամենայն ազգեր, ոյք հեռացած են Աստծուց և Աստուածապաշտութեան ճանապարհներից. և գնացած են իրանց կամքի յետևից. և չեն լսած մշտաբարոզ ձայնը զգուշացուցիչ և խրատական, որ ուղարկուած է նրանց Աստծուց կանխապէս, իւր Մարգարէներով՝ ենթարկուած են պատժի և կորստեան, իւրեանց անօրէն գործոց պատճառաւ. որ և ական յանդիման աշխարհի են, սրբազան պատմութիւնով, և անուրանալիք:

Աստուած նոյն է ՚ի յաւիտենից. և նոյն արդարութեան դատաստանը անփոփոխելի է և անաչառ, ամէն ազգաց համար: Ուրեմն, և մեզ ևս կ'դատէ արդարութեան դատաստանով, մեր մեղաւորութեան և չարեաց պատճառաւ, եթէ չենք զղջայ, և կ'յամառինք յանցաւորութեամբ ընդդէմ Աստուծոյ: Եւ որին արդէն իսկ ևս, ծանօթ է Հայ Ազգն, իւր կենսական անձնական

փորձառութեամբն, իւր ապստամբութիւնով և կրած պատժով, ներկայ ժամանակով: Եւ որքան աւելանան ապստամբութիւնն, ընդդէմ Աստուծոյ, և չարիքն, այնքան ևս կ'աւելանան պատիժն կորստեան, մինչ իսպառ: Այդ է ուսուցանում սուրբ Գիրքն:

Եւ ուրեմն ամենայն ոք ազգային որդի մարդոյ, պարտաւոր ենք լինիլ ուշադիր արդարութեան. և ուղղել մեզ. և չ'մոլորցնել անմեղ սերունդը, ընդդէմ Աստուածապաշտութեան: Այո, պարտաւոր ենք ՚ի միտառնուլ և խելամտել: Եւ ի՞նչ իրաւունք ունին գայթակղեցնել անմեղներին: Ի՞նչ ապացոյց, ի՞նչ հաւաստիք: Խնդիրն, կենաց և մահուան խնդիր է, որի առաջին դատապարտելի են ամենայն անձնական կամք և անտարբերութիւն սրտի:

Եւ անմտութիւն է երկմտիլ Աստուծային յայտնութեան վերայ: Խօսքը և փորձը կան ՚ի միտսին, վկայք հաստատունք և անժխտելիք. Դործնական և յայտնական:

Տէր Աստուած գթած և ողորմած է. և չի կամենում մարդկան կորուստը. վասնորոյ և հրաւիրում է յուղղութիւն: «Դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ, ասէ Տէր Ամենակալ:» Մաղ. Գ. 7:

Եւ թէ. «Ո՞վ ետ յափշտակութիւն զՅակոբ. և զիսրայէլ ՚ի ձեռս աւարառաց. ո՞չ ապաքէն ես Աստուած, որում մեղանն. և ո՞չ կամեցան գնալ ընդ ճանապարհս նորա. և ո՞չ լսել օրինաց նորա: Եւ աժ ՚ի վերայ նոցա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ. » Ես. ԽԲ. 23:

Իսկ ստունդանողներին և հետադողներին հա-
ասած է.

«Խրատեսցէ զքեզ ապստամբութիւնդ քո. և
չարիք քո կշտամբեսցեն զքեզ: Եւ ծանիցես և
տեսցես. զի չար և դառն է քեզ թողուն զիս.
ասէ Տէր Աստուած քո: Ես. Բ. 19:

Հետեալ սրտերը դժուարաւ կ'հնազանդին
բարւոյն. սակայն մարդ պարտաւոր է յաղթող
հանդիսանալ չարին, հեզ և հնազանդ սրտով. և
կեցուցանել իւր անձն և իւր Ազգն:

«Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն
զերկիր»: Մտ. Ե: 5:

«Ազգային գրադարան



NL0161361

